ԿԻԼԻԿԻԱ

ԱՍՏԱԾԱԲԵՐԱԿ

ԱՌՈՂՋԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՄԱՆՈՒԷԼԻ ԲԱՐՈՒՆԱԿ ՀԻԹԻՒՄԵԱՆ

ՏՈՂԹՕՐ ՖԱՐԻՋԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԹԻՒ 7, ՅՈՒՆՎԱՐ 1.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Թ. ՏԻՒԼԻԹՃԵԱՆ. ՎԷՋԻՐ ԽԱՆ, ԹԻՒ 20

1868

Կ Ի Լ Ի Կ Ի Ա

ՀԱՅԳԵՍ

ՄԻԱՄԻՑԱՅ

ԱՌՈՂՋԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ԱՐԱՋԻՆ· 1868, ՅՈՒՆՎԱՐ 1· ԹԻՒ 7·

ՆՈՐ ՏԱՐԻ

Ազգային Հիւանդանոց և Պոլոտ։

Սիրելի Ազգայնոց, Նոր Տարին շնորհաւորելու առթիւ չպիտի կրկնեմ այն բառերն, որք վաղուց անտի սովորութիւն եղած են. զի ով չգիտէ թէ անցաւ տարի մ'ալ, մտանք 1868 Թուականն, ևայլն, սակայն Հայը ճնաց, նոյնն, ինչ որ էր 1866 Թուականին. ուստի այս կէտին վրայ խիստ համառօտ անցնելով, և Նոր Տարին շնորհաւորելը գեղեցիկ ու պատեհ առիթ համարելով, կսկսիմ խօսքս։

Յօդուածիս վերնագիրն, ինքնին կ'յայտնէ թէ, նպատակս է, Ազգային Հիւանդանոցին և Ազգային Պարտուց վրայ խօսիլ. բայց ոչ թէ, նկարագրել է, զորօրինակ՝ Ազգային Հիւանդանոցի այժմեան կացութիւնը, զի գիտենք թէ այս Ազգային Պաստառարանն, Որբանոցը, Հիւանդանոցը կամ Հիմարանոցն, ևայլն, ինչպէս, կամ որն որ կուզես կոչել, զի ամէն բան է, Պ. Փանոսեանի անօրէնութեան ներքև, ու Ազգայնոց պաշտպանութեան տակ ըլլալէն ի վեր, անբաղդատելի կերպիւ, ըսենք, բոլորովին կերպարանափոխ եղած է. սնունդ, դարման, հանգստութիւն և մանաւանդ մաքրութիւն, կարելի եղածին չափ գոհացուցիչ վիճակի մէջ է։ Հիւանդանոցի այժմեան կացութեան վրայ, աւելի կատարեալ տեղեկութիւն առնել փափաքող Ազգայինք, կրնան երթալով հոն ամէն բան անձամբ քննել և տեսնել. իսկ Պաւառային Ազգայնոց համար, բաւական է որ, Հիւանդանոցի ամսական ծախուց և մտից հաշուէցուցակը կարդան, զոր

Տ. Մ. Ա. Խրիմեան։

ձեռանձին, տետրի ձևով, և Օրագրոց մէջ, ամէն ամիս կհրատարակուի։

Վերջին օրերուս մէջ, Հիւանդանոցի վրայ զանազան տարաձայնութիւններ լսուեցան, շատերը տեսակ տեսակ մեկնութիւններ տուին, Ազգային Ուժամանակեայ Վարչութեան կողմանէ յատուկ Ժողով մը խնդրուեցաւ, ամէն բան աչքի տեսնելու և քննելու. ասոնց ամենքն ալ իրենց իրաւունքներն ունին. Ազգայինք, ինչպէս և Ազգային Վարչութիւնը միշտ իրաւունք ունի քննել և հարցնել. ո՞ր չափով որքան ալ, սոյն Հաստատութիւնն, այսօր Պ. Փանոսեանի յանձնուած է, ըսել չէ թէ, Ազգայինք և Ազգային Վարչութիւնն իրաւունք չունին հաշիւ պահանջել, քննել թէ հիւանդք, ըստ օրինի կդարմանուի՞ն, որք՝ կարծուածին չափ կխնամուի՞ն, մէկ խօսքով հոն գտնուող ամէն պատսպարեալք կարելի եղածին չափ հանգիստ կվայելե՞ն. այս իրաւունք մ'է որ Ազգայինք միշտ կրնան գործադրել. որովհետև Հիւանդանոցն Ազգինն է. որովհետև ամէն Ազգայնոց, աղքատ և հարուստ Հայուն տուած ստակովն է որ, այսօր Պ. Փանոսեան կխնամէ այնչափ պատսպարեալք։ Ազգայինք չնորհակալ են միշտ, և պիտի մնան Պ. Փանոսեանի, որ այսպիսի ծանր պաշտօն մը վարելու, ըսենք մեծ և ծանր ծառայութիւն մը կատարելու սիրով յանձնառու եղաւ. իրաւ է որ ձրի, Ազգային պաշտօն վարել չէր ուզեր, Պ. Փանոսեան, սակայն այս մասին կարելի է խոտորմունք մ'ըրած ըլլայ. զի ամէն կանոն, իր խոտորմունքն ունի. կարելի է ուրիշ բարի խորհուրդ կամ գաղանիք մ'ալ ունեցած ըլլայ, բայց ինչ որ ալ ըլլայ կամ մտածէ, անշուշտ ժամանակը պիտի յայտնէ։ Մենք ուրախ ենք, չէ թէ, Ազգային Հիմնք մը, Ազգային Ընհատի մը միջոցաւ այսպէս կարելի եղածին չափ գոհացուցիչ կերպիւ կխնամուի. զի ասի, եթէ անպատուութիւն չէ Ազգային Վարչութեան, անուրանալի է թէ, մեծ նշան է տկարութեան, չըսեմ անկարողութեան. մենք ուրախ ենք, ըսինք, որովհետև այս կապացուցանէ թէ, Ազգային որ և է գործ, որչափ ալ ծանր ըլլայ, եթէ Ազգայինք կամենան, ուզեն, կրնան ընել և գլուխ հանել. մեր այս ըսածն երևակայութիւն չէ, զի կտեսնենք փորձն, ըսել կուզենք Ազգային Հիւանդանոցն, որ այսօր, ամէն Հայուն աղքատ և հարուստ Ազգայնոց տասը, քսան և քառասուն փարայով կխնամուի։

Եթէ, նկատի յօդուածիս նպատակը, միայն Ազգային Հիւանդանոցին վրայ խօսիլ ըլլար, շատ երեսներ կրնայի լեցնել, բայց ուրոշած ըլլալով, առանձին յօդուածով, մեր կարծիքն, այս մասին յայտնել, զորօրինակ ի՞նչպէս պէտք է ըլլալ Հիւանդանոցի մը շէնքը, թէ Հիւանդանոց ըսելով ի՞նչ պէտք է հասկնալ, թէ խնդ՝

անարատ ; անկաթ խեղանդամ (սակատ) և հիւանդ գանուած կեդրոնի մը մէջ, միանգամայն , դպրոց ալ կրնայ մի ըլլալ, ևայլն . ուստի բոլոր այս կէտերուն վրայ ընդհանուր տեսութեամբ , մեր կարծիքն յայտնելը , Կիլիկիոյս յաջորդ թուոյ մը թողլով· այսօր սա միայն կըսեմ և կրկնեմ ըսել թէ , Ազգային Հիւանդանոցին այս եղանակաւ պահուիլն , ապահով չէ , և վախճան չունի և չկրնար ունենալ, որովհետև փանոսեան մը կրնայ զանազան պատճառներով իր ծառայութիւնը դադրեցնել, ինչպէս և Ազգայինք իրենց նուէրն . ուստի Ազգայինք և փանոսեան այս չմոռնալով, մեզ հետ , պէտք է հիմայէն ապահով միջոցը ձեռք ձգելու եաևէ ըլլան : Հիւանդանոցին այս եղանակ մատակարարութիւնը , ցաւ է ինձ հոս խոստովանիլ, թէ Ազգայինքս և փանոսեան , այսինքն՝ առնողն ու տուողները , մարդուս ամէն կերպ յառաջադիմութեան նպաստող , այն մեծ գիտութեան ; ըսել կուզինք "Տնտեսական Վիճակ" տեղեակ չենք . որոյ ճշմարտութիւնը քիչ մը վարը պիտի յայտնենք . — ըստ մեզ , պէտք է Ազգային Հիւանդանոցին տարեկան ծախքին չափ եկամուտ պատրաստելու և ունենալու միջոցներ հայթայթել . զորօրինակ , բոլոր Ազգայինքս , միութեամբ և սիրով , նման Կ . Պոլսոյ , Գալաթիոյ մէջ , Հիւանդանոցին կտակեալ հողին վրայ , քարուկիր շէնք մը կանգնել, որ կարելի է , դարձեալ Կ . Պոլիս բնակող Ազգայնոց տասը , քսան կամ քառասուն տարայ նուէրովին . որոյ համար հետևեալ առաջարկութիւնը , Կ . Պոլսոյ Հայոց կներկայացնենք . — հիմայ , որ եղանակը , ձմեռ է , և շէնքն ալ սկսիլն անկարելի , խիստ աղէկ կըլլայ , որ Կ . Պոլիս բնակող Ազգայինքս , ամէն թաղերէ բաշկացեալ, ընդհանրութիւնը ներկայացնող յատուկ Մասնաժողով մը կազմենք , Կ . Պոլիս բնակող ամէն Հայերէ , Հաբաթական , քսանական տարայ նուէր ժողովելու , մինչև Մայիս ամիսն ; որ եթէ այս Նուիրատու ամէն սկսուի , հինգ ամիս կրնէ : և ենթադրելով , որ Կ . Պոլսոյ մէջ , մինչ 50,000 Հայ գտնուի , հաբաթը քսան տարայ վճարող կամ վճարել ուզող , մէկ ամսուան մէջ 100,000 ղրուշ կրնէ , որ ըսել է մինչև Մայիս , հինգ ամիս 500,000 պատրաստ դրամ կունենանք , և եթէ չեմ սխալիր , 500,000 ղրուշով , բաւական եկամուտ բերող քարուկիր շէնք մը կրնայ շինուիլ . վերջապէս եթէ սոյն շէնքը շինել չուզուի , վերոյիշեալ դումարին եկամուտովն , և արդէն Հիւանդանոցին , իր ունեցածովը , կրնայ վնասուիլ , որով , ալ այնուհետև , ամէն Ազգայինք կաղաչին շարունակ , ամէն շաբաթ , ամէն օր , Հիւանդանոցին համար տուրքը կամ նուէր տալէ : Այս առաջարկութիւնն ընելով չէ թէ , Ազգայինք՝ անդադար շաբաթական , օրական նուէր

կամ տուրք տալէ , ազատել է միայն , այլ աւելին , ջանքերնիս , փա-
փաքնիս ու նպատակնիս է Հիւանդանոցին ներկայ և մանաւանդ ա-
պագայ կացութիւնն ապահովցնել. ղն մինչև որ , Հիւանդանոցն իր
եկամուտովը պահուելու կարող չըլլայ , պէտք չէ մոռնալ , թէ Հիւան-
դանոցի մէջ պատսպարելը , միշտ վտանգի մէջ են , նորէն թշուա-
ռութեան , աղտոտութեան մէջ խնալու . այս կըսենք , որովհետև
մորձառու ենք , որովհետև Հիւանդանոցին , այսօրուան ունեցած վի-
ճակին նմանը , չըսեմ աւելի երջանիկ վիճակը , տեսած ունինք . —այս
առաջարկութիւնը կընենք , չէ թէ միայն , Հիւանդանոցի ապագայն
ապահովի չտեսնելնուս համար , այլ որովհետև այսպիսի մատակարա-
րութիւն մը , յարատև չկրնար ըլլալ , որովհետև Տնտեսական վի-
ճակութեան դէմ է . այո , այս մեծ և ամենակարևոր գիտութեան օրի-
նաց և սկզբանց դէմ է . ղն երթէ Հիւանդանոցն սկզբանէ , նոյնպէս
և Պ . փանոսեանի Տնօրինութեան տակ ըլլալէ ի վեր , Հիւանդա-
նոցի համար ժողվուած ու ծախք եղած դրամարն , եկամուտի պակաս-
ցընել խորհուէր , այսօր , մէկ քանի Հիւանդանոցներ իրենց եկամու-
տովը , խնամ ճոխ , հարուստ կերպիւ կրնար մատակարարուիլ . տես
Ընթերցող թէ որչափ կարևոր են գիտութիւնք , ազգի կամ անհատի
մը համար . եթէ առողջաբանութիւնն առողջութիւնը պահել , հիւան-
դութիւնը հեռացնել , մահն ուշացնել , մէկ խօսքով կեանքը բարե-
բաղկեցութեամբ երկարել կսովրեցնէ , այնպէս ալ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆն,* ապագայ կամ անհատին , ինչպէս հարուստ ըլլալը ,
կամ բարեբաղկեցութեամբ ապրիլը կսովրեցնէ . "Ա՛ր ասվէր կըսէ , Լա-
զէռ , ինչ ինչպես շահիլն , այլ ասվէր նաև ըն է նպատ պէտ է ծախս ընել .
նոյնպէս և Համիօ , ըսած է թէ , Տնտեսական Վիճակութիւնը , մարդոց
անկախ ըլլալու մեծ միջոց է : Ուստի կխրախուինք , որ Ազգայինք ու-
շադրութեամբ կարդալով մեր այս տողերը , մեզ հետ ընկերանան
վերոյիշեալ առաջարկութեանս գործադրութեան . մեկդի թողլով անձ-
նական վէճերը , խորհինք հանդարտութեամբ , Ազգային ներկային
մըտայ . մեր անցեալն , իբրև դաս առնելով , ապագայնիս չմոռնանք :

Իսկ Ազգային Պարտքին գալով , նոյնպէս չպիտի խօսինք , այժ-
մեան Վարչութեան առաջարկութեան վրայ . որոյ ընդունելութիւնը
կամ ոչ , բոլոր Ազգայնոց , Պօլսոյ և Գաւառային Հայերու ընդհա-
նուր հաճութենէն կախումն ունի . մենք , սոյն առաջարկութեան վրայ
բառ մ՚անգամ գրել չենք ուզեր , որովհետև ըստ մեզ անգործադ-
րելի է , որովհետև արդարութեան և իրաւանց համաձայն չէ . ինչո՞ւ համար

---

*Այս պատուական և կարևոր գիտութեան վրայ ընդհանուր տե-
ղեկութիւն մը ժառանգ համար , միլիկիայիս յաջորդ թուով , հոչակա-
ւոր Տնտեսագիտի մը ճառը պիտի հրատարակենք :

ղորվինակ , Առաջեին , Երկնկացին կամ Սեբաստացին , Պօլսեցւոց պարտքը վճարէ , քանի որ Պօլսեցին Առաջեցւոյն , Երկնկացւոյն կամ Խաղեշցւոյն պարտքը վճարած չունի , չվճարեր և պէտք չէ որ վճարէ . ամէն քաղաք , քանի որ առանձինն իր Պատրոյն , Եկեղեցին , Առաջնորդարան , ու Ազբատներն ունի , քանի որ բոլոր ասոնք , նոյն քաղքին մէջ գանուող Ազգայնոց տրօքը պահուած են , կպահուին մինչև ցարդ , և պիտի պահուին այսուհետև , ամէն քաղաք իր տուրքն , և պարտքն իրեն վրայ առնելով . այս ըսելով , միտք չունինք Ազգային Վարչութեան առաջարկութիւնը չընդունել տալ Ազգայնոց . Ազգային պարտուց կամ աւելի ճիշդը խօսելու համար , Կ . Պօլսոյ Ազգայնոց պարտքը վճարելու համար , Ազգային Վարչութիւնը մէկ անգամի համար , ընդհանուր Ազգէն նուէր մը խնդրելով , կրնայ բոլոր պարտքը սրբել . — ասի ամէն ազգայ մէջ եղած է և կըլլայ . — ըստ մեզ , Ազգային Պարտքը վճարելու համար , աւելի աղէկ կըլլայ և դիւրին , դարձեալ Կ . Պօլիս ընակող Ազգայիններէ շաբաթական քսան փարայ ժողովելով , այս ծանր մտատանջութենէն ազատելու համար յատուկ Մասնաժողով մը կազմել , Կ . Պօլսոյ Ազգայնոց ընդհանրութիւնը ներկայացնող Մասնաժողով մը , որպէս զի ամէն թաղերու մէջ աշխատողներ գտնուի սոյն ժողովին մէջ . — ահա կազանդ , Տնունդ , օրեր , որոնց առթիւ , ամենքնիս ալ , հարուստ և աղքատ , քիչ շատ , ամէն ոք իր կարողութեանը համեմատ կարգէ դուրս ծախքեր կընենք . եթէ ամենքնիս ալ միասորհուրդ այս տարի , ֆելիթ , չերթէ կամ անօթ ապրիլ չուտել ուխտենք , և նոյն ուտելիքին համար ընելիք ծախքերնիս , կամ անոր մէկ մասը գտնէ մէկ կողմ գնելով , Կանձանակի մը մէջ ժողովենք , կրնանք ըսել թէ , մենք , միայն Պօլսեցի հայերս , ազգին պարտքը կրնանք տալ . — այս ընելով նաև ամէն Գաւառաբնակ Ազգայինք իրենց պարտուց համար , շատ աղէկ կըլլայ . և ի՞նչ կըլլայ մէկ անգամի համար պակաս չերթէ , ֆելիթ կամ անօթ ապրիլ ուտելով , ազգին պարտքը վճարուի . ազատուի մեծ մտատանջութենէ մը , որնոր մեծ արգելքներ եղած է ամէն տեսակ ազգային գործոց անօրինութեան . չլսուի սովորութիւն եղած սա խօսքն , ի՞նչ ընենք , պարաք կայ , պարտք կայ . — ալ ամէն մարդ , տղայ և երիտասարդ դիտէ ազգին պարտքն , ուստի այսուհետև ալ , զանի վճարելու դիւրին միջոցի մը վրայ խորհինք : Մենք մեր կարծիքն յայտնելով , այս առաջարկութիւնն Ազգայնոց ներկայացնելով , պատրաստ ենք ուրիշներուն այս մասին ըսելիքները կարդալ . բաւական է որ ազգին պարտքը վճարուի , իմ կամ քու ըսած և ցուցուցած միջոցաւ . . . : —

Ցուսով որ Նոր Տարին , ազգիս համար նոր և երջանիկ օրեր պիտի բանայ , զորս ի սրտէ փափաքելով , և Նոր օրս շնորհաւորելով , մեր Մեծարգոյ Համաձորդաց ի Պօլիս և ի Գաւառս ,

Ձեռամ Ազգիս անձնուէր

Տ . Մ . Բ . Խիթիմեան

ԱՌՈՂՋԱԿԱՆ

Տլուխնէր առողջ պեղպեղելու նոր ըրուխնէրը *։

Ակնկիայիս 3 և 4 թուոց մէջ այս վերնագրով յօդուած մը հրատարակեցինք, որով յառաջ բերինք համառօտիւ, տղայոց առողջութեան, դաստիարակութեան և կրթութեան վրայ աշխատողներուն, ինչպէս Դաղղիացի Մօնթէյն, և Հ. Հ. Ռուսօ փիլիսոփայից. Անգղիացի Լօք Յովհաննէս փիլիսոփայի. Գերմանացի Հիւֆլանտ Յովհաննէս և մարդասէր Ֆրէտերիկ Ֆռէօպէլի դրուխնէրն ու մեթոտները, զորս կրկնել պէտք չհամարեցաւ,** առողջաբանական այս ամենաարժէք և կարևոր խնդրոյն վրայ Ազգայնոց ուշադրութիւնը կդրաւենք։

Վերոյիշեալ հռչակաւոր հեղինակաց այս մասին դրածներն, Ազգայնոց հաղորդելով, նպատակիս չէ թէ սոյն դրուխնեանց ամէն մէկ կէտերն ալ, մեր Ազգային Մանկտիկներուն դաստիարակութեան և կրթութեան առաջնորդ բռնելով, սոյն սկզբանց հետևել է, այլ զանոնք սովրելով մեզ յարմարելիքներն առնել։ Օվ ամէն հեղինակ, իր ազգին ճաշակին, վիճակին և սովորութեանց համեմատ գրած է. յայտնի է թէ, Դաղղիացին, Անգղիացին, Գերմանացին, նոյնպէս ամէն ազգ, իր մասնաւոր սովորութիւններն ունի. ամէն ժողովուրդ, իր բնական երկրին, կլիմային համեմատ կդաստիարակուի. որքան ալ որ դաստիարակութեան հիմունքն ու սկզբունքը մի և նոյնն են և պիտի մնան ամէն ազգաց համար, սակայն և այնպէս դաստիարակութեան միջոցներուն գործադրութիւնը կզանազանի ամէն ազգաց մէջ. ամէն մարդ, որ ազգէ և քաղաքէ ըլլայ, անանելու համար ուտել կպարտուորի. ամէն քաղաքի բնակիչ, կուտեն ապրելու համար, սակայն ամէն կերակուր և անուշդ որքան որ ալ անդադար և առողջարար ըլլան, և՛ն իրենց տեսակաւն ու որպիսութեամբն, այսու ամենայնիւ, այն ինչ ազգին կերակուրը, միւս ազգին չյարմարիր. զորօրինակ, որքան որ Անգղիական պէֆ-ընդ (սըղբրի միսի քիւլտասաէն) առողջարար և անդադար կերակուր մ՚է, և որքան որ Անգղիացին ու Անգղիա բնակողն սոիպեալ է ամէն օր զանի անպատճառ ուտել, առողջութիւնն անվտանգ պահելու, և զանի մարսելու համար ալ վրայէն թէյ

*Տես Ակնկիա. Թիւ 3 և 4։

**Կսպասենք որ այս յօդուածս կարդալէ առաջ վերոյիշեալ բժշկաց և փիլիսոփայից դրուխնեները կրկին աչքէ անցնեն ընթերցողք։ —

(ՀԵ) խմել. Նոյնպէս Վաղվնացին և Վաղվնա բնակողն, իր աչխու-ժուԹիւնն ու առողջուԹիւնը պահելու համար, գինին ամէն կերա-կուրի առեն խմել սիրելալ է, բայց այսու ամենայնիւ չհետևիր Թէ պիճիկներ, գինի և ՀԵ ամէն ժողովրդոց և ամէն քաղքի բնակչաց համար կարևոր է և պետք, որքան ալ որ այս կերակուրներն ըստ ինքեան օգ-տակար են և առողջարար։

Ընդայինք մեր այս տողերը կարդալով, իրաւունք չունին հետև-ցընելու Թէ, ուրեմն, Պօլսեցիք ալ, նոյնպէս Վաւառաբնակ Ընդա-յինք, անպատճառ ամէն երեկոյ, շուկայի դարձին, առանց ուղղակի ամէն մէկն իրեն տունն երԹալու, նախ Վիննետուն, ԽօլԹուխ, կամ Օքօսաբան մտնելով, օղիով Թունաւորուելու են. որովհետև օղին ամէն մարդու, ամէն քաղքի բնակչայ. ինչպէս Հայուն, նոյնպէս Վաղ-ղնացւոյն, Ընդղնացւոյն, Վերմանացւոյն կամ Ամերիկացւոյն վնասա-կար է. որովհետև օղին և օղիի բաղադրուԹիւնն ունեցող ամէն տեսակ ոգելից ըմպելիք, ինչպէս ճին, րոմ, ապսինի Հայըն, բոլորն ալ Թոյներ են ըստ ինքեան և բնուԹեամբ. ասոնք ալ իրենց տեսա-կին մէջ օգտակար են, բայց միայն բժշկաց և դեղագործաց միջոցաւ ի Հարկին մատակարարուելով։

ԸնԹերցող, ԵԹէ, օղիի և օղիի բաղադրուԹիւնն ունեցող ոգե-լից ըմպելեաց վրայ յաճախ կխօսիմ, չէ Թէ մանաւոր կիրք կամ ԹշնամուԹիւն ի՛ունիմ, այլ բժիշկ ըլլալով, աղէկ համոզուած եմ, մանաւանդ բաւական աչխատուԹիւն զոհելով գտած եմ Թէ, օղիի և օղիի բաղադրուԹիւնն ունեցող ոգելից ըմպելեաց սովորուԹիւն ու-նեցողն, Հարիւրէն աւելի հիւանդուԹիւններ ծնունդ առած են, նա մանաւանդ, որ, և մեծ գժբաղդուԹեամբ, օր ըստ օրէ ալ, այս Թիւն մեծնալու վրայ է. ԵԹէ օղին միայն զանի գործածողները վնասէր, կարելի է այսչափ յաճախ, Կիլիկիայիս գրեԹէ ամէն Թուոյ մէջ չէինք կրկներ, և այս առԹիւ կարելի էր մեր ԸնԹերցողաց շատերը չձանձ-րացնել. բայց քանի որ Հայր մը կգինովնայ, անուրանալի է Թէ, իր ընտանիքն ալ իրեն Հետ կմիշտառանայ. գինովը կմոռնայ իր ընտանե-կան պարտքերը, կմոռնայ իր կինն ու զաւկներն. ասոնք որ առն երեկոյ, ուրախուԹեամբ կսպասեն, իրենց Հօրն առաջ ելլելով, մէկը ձեռքը (Հօր), միւսն՝ երեսը համբուրելու, որ մէկը՝ վիզը պլլուե-լու, բոլորովին Հակառակը կըլլայ. զի Հայրերնին գինովցած, խելքը միտքը կորուսած, Հօր որդիական սէրն ու զգացմունքներն, օղիին ոգիով Թմրած, Հազիւ կկարողանայ ինքզինքը տուն ձգել անմիջապէս պառկելու, կամ Հայհոյելու, որ մէկն՝ իր կինը ծեծելու, որ մէկը զաւկներին գետնէ գետին զարնելու, ևայլն, ևայլն. ասոնք ալ

օղնին բարոյական հիւանդութիւններն են : Լսենք դիտնալովս , և ա-
մէն օր Պօլսոյ զանազան արուարձաններուն մէջ անհամար դիւղացիներու
խումբեր տեսնելովս , փղձկելէ ինչպես ծծդնելու վրայ յօդուածդրե-
լու զբաղած ատենս , խորհեցայ թէ , զանազան ազգայ , փղձկելէ ա-
ռողջ ծծդնելու նոր դրութեանց համառօտութիւնն ազգայնոց հաղոր-
դելէն առքն , ընելիք ծառայութիւնս կարելի եղածին չափ և կարո-
ղութեանս համեմատ կատարեալ ընելու համար , նախ՝ սկսիմ ‘‘մայր
պարպաոլոնեանց վրայ խօսիլ’’ , զըօրինակ տղան յղացած ատեն , մայր
մը պէտք է դիտնայ ինչպէս ապրիլ , ուտել և հագուիլ . զի կնոջ
ապրելու եղանակը , մեծապէս կազդէ իր արգանդին մէջ մեծցնելիք
զաւկին վրայ , և ինչպէս որ տղուն առաջին դաստիարակն է մայրը ,*
տեսնենք ի՞նչպէս ապրելու են կանայք :

Լուած եղած է սա խօսքը թէ , ‘‘Լմենէն փափուկ մեծցած տը-
ղաքներն , աւելի յաճախ հիւանդ , և հետևաբար տկար կազմուածքի
տէր , և միշտ վատառողջ կըլլան’’ . այս առածին իրրև հետևութիւն ,
քաղաքաց մէջ մեծցող տղաքներըն գիւղացի տղայոց հետ կրնադա-
տեն , ըսելով թէ , առաջիններն՝ առատութեան , բարեբախտութեան
մէջ , և ամէն տեսակ խնամքով ապրելով , գունեղ , տկար , զղային ,
և մինչև մահուան վտանգը կրկնան ակռայ մը հանելու ատենին . իսկ
վերջիններուն՝ կերակուրները դժուարամարս , շատ անգամ պարզ հացն
ըլլալով , օդն ապականեալ , գարշահոտ և խոնաւ բնակարանաց , և
մանաւանդ անտանելի աղտոտութեան մէջ ապրելով , պաղլ և տաքլ
հոգ չտանելով , ոտքերնին մերկ , կուրծքերնին բաց , այսուհ ամենայնիւ ,
երեսին կարմիր , դէմքերնին առոյգ , և մկաններնին ուժով են :

Եթէ այս ճշմարիտ ըլլար , ապրուստութիւնը՝ դիտութենէն , աղքա-
տութիւնը՝ հարստութենէն , անդրդուշութիւնը՝ հոգածութենէն աւելի
նախապատիւ պիտի ըլլար . և Ընթերցողն ալ հետևաբար պէտք չպիտի
ունենար մեր այս տողերը կարդալու , որք նպատակ ունին , Ընթերցո-
ղաց օգուտն ու առողջութիւնը :

Ի Ա· դար , այսինքն 2400 տարի առաջ , Հիբոկրատ , Բժշկա-
կանութեան Հայրն ըսած է թէ , ‘‘Ան բաներ , որք առողջութեան
կնպաստեն , կան բաներ ալ որոյ կվնասեն , ուրեմն բժշկութիւն մ՚ալ
կայ’’ : Հիբոկրատի այս խնամատուն խօսքէն կրնանք հետևցը-
նել մենք ալ , թէ , Ուրեմն , առողջապահութիւն մ՚ալ կայ , և հե-
տևաբար տղայոց վերաբերեալ առողջապահութիւն մը , որոյ վրայ պիտի
խօսինք :

---

*Տես Թանգարան կիլիկիոյ . հատոր առաջին . ‘‘Առողջապահու-
թիւն հոգեկան’’. երես Դ·ը յառաջաբանին :

Հոս յարմար կտեսնեմ , Մօնբէլիէի (քաղաք ի Գաղղիա) Բժշկական Ճեմարանի , Առողջաբանութեան Դասատու , Հռչակաւոր Ֆօնսագրիվի ,* մէկ պատմութիւնն , Ընթերցողաց Հաղորդել· զոր կսկսի այսպէս · " Մէնան օր մը , ծովի եղերքը ժուռ գալու ատենս , ձրկնորսի մը հանդիպեցայ , որ երեք չորս տարեկան աղջկան մը ձեռքէն բռնած կպտրտէր · — աղջկան վրան գլուխն աղտոտ ու պատռտած , ոտքերը մերկ , բայց աչաց աշխուժութիւնն ու երեսին գոյնին կարմրութիւնն , առողջ կազմուածք ունենալը կյայտնէին · և մենք որ , մօր մը հետ ընկերացած էինք , նա չկարենալով համբերել , աղջիկը շոյելով տխուր ֆառաչանօք մ'ըսաւ անոր. Հօրն , Երանի՞ քեզ , որ այսպիսի առոյգ ու առողջ աղջիկ մ'ունիս · — որոյ անմիջապէս պատասխանեց ձկնորսն · "Այ , երջանկութիւնը միայն ինէ կպակսի , Տիկին · զի հինգ զաւկներէս միայն այս մնաց" : Ասի ճշմարիտ էր , կըսէ Ֆօնսակրիվ , անհոգութեան մաղէն անցնելոնին , միայն մէկը մնացեր էր : Ուրեմն , այս համառօտ , բայց մեծ նշանակութիւն ունեցող պատմութիւնը կապացուցանէ թէ , պէտք է տղաքները խնամել· նոքա պահանջում կընեն արդարև , ծնած վայրկեաննէն , ընկերութեան հետ սերտ կապակցութիւն մը , թէ նոքա մարդուս գոգոններն (քօղա) են , պէտք ունին իմաստուն խնամոց , և ոչ թէ աննախատես և կոյր վարիկութեան մը , որ միայն ներկայ ժամը կտեսնէ , որ ուրիշ օգուտ կամ նպատակ չունի , այլ ժպիտ մը արտադրել կամ արցունք մը չորցնել· և եթէ մայրերն՝ իրենց կենաց այս մեծ պաշտօնն , ընդհանրապէս ըստ օրինի չեն կատարեր , պէտք է խոստովանիլ , թէ պատճառը՝ փոքր ինչ փարիկութիւն , և աւելին կամ բոլորովին տգիտութիւնն է :

Այժ ի՞նչպէս և ո՞րկից պիտի սորվին ասոնք · որ դպրոցայ մէջ ստացած են , կստանան և պիտի ստանան կանանց ամենակարևոր եղող առողջաբանական այս տեղեկութիւններն , որք կազմելու են , նոցա դաստիարակութեան գլխաւոր մասը : Նոքա կսորվին , ինչպէս կըսէ , Ֆօնսակրիվ , Պէնէլովպէի** նման կար կարել , Փոհիի*** նման

---

*Գաղղիացի բժիշկ և Առողջաբան · Դասատու Առողջաբանութեան , Մօնբէլիէի Բժշկական Ճեմարանին . — ասի որ կապրի դեռ , կաշխատի , Առողջաբանութիւնն ընդհանրացնել բոլոր Գաղղիոյ մէջ · առաջարկելով , որ ամէն դպրոցայ մէջ դասախօսուի :

**կին Ողիսեայ , մայր Տէլեմաքայ :

***Ղմանը չծնած գեղեցիկ օրիորդ · — Փոհիի Յունարէն լեզուաբոյժ կինանակ :

պարել, զանազան տեսակ անուշներ եփել, ինչպես Ալբֆիլտ* աղատամիտ և գիտնական կղերականին օրիորդը. բայց մայրական պաշտօններուն գալով, բնութեան սովորեցուցածէն աւելի չեն գիտեր: Ասոր օրիորդաց և կանանց, այս մասին անգիտութիւնն յայտնելով, ըսել չենք ուզեր թէ, նոքա, մեր շատ մը ամուսնացեալ և մայր եղող կիներէն աւելի անգէտ են. չենք ուրանար թէ նոքա մեծ արժանիք ու համարում ունին, ասկից քսան տարի առաջ ապրող օրիորդներէն, թէ քիչ, շատ բան կսովրին, կկարդան և կգրեն, և հետևաբար մենք, նոքա և իրենց ղաւկներն աւելի լաղդաւոր են և պիտի ըլլան, սակայն վստահելի և անհրաժեշտ է, թէ, ամենէն առաջ, ամենէն կարևորագոյնը փնտռելու և գանի ձեռք ձգելու եռանդ ըլլալու ենք. չմոռնալու ենք թէ, այն գիտութիւնն, որ ուղղակի կամ անուղղակի, մօտէն կամ հեռուէն, տղայոց ֆիզիքական կամ բարոյական կրթութեան չնպաստեր, անօգուտ գիտութիւն մ'է, անոնց, կանանց համար:

"Կանանց ճակատագիրն", ըսած է, Տիկին տը Սթաէլ** "Եւրոպացւոց մէջ դերութինէ ազատողներուն ճակատագրոյն կնմանի զանազան նկատմամբ, եթէ յառաջ երթալ փափաքին, ջրինաց դէմ կգտնեն. եթէ գերի մնան, ճակատագիրնին կճնշեն": Երկար չորս կիներէ ընդունելալ այս ամբաստանութիւնն, որք եթէ, այն ինչ դարուն, իմացական պաշտօն մը կվարէին, ուրիշ դարերու համար անյարմար են. անոնց ազդեցութիւնը մարդկային մտաց ընթացքին վրայ, երիկ մարդուն նման ուղղակի ըլլալու տեղ, անուղղակի, և միայն դաստիարակութեան միջոցաւ կազդէ: Անոնց աչքին, անոնց կարին առանց իմանալնէն, աստիք են ահա, կանանց երրեակ և սքանչելի պաշտօնն. և թող չդանդատին, ղի անշուշտ պաշտօններուն մեծագոյն մասն ընդունած են:

Ուղղաբանութիւնը, դեռ մեր և մերինին նման շատ ազգաց, քիչ կամ բնաւ, ծանօթ չըլլալուն, յայտնի է որ բնաւ հասկցուած չէ, թէ, ի՞նչ ազդեցութիւն ունի կիւնն ընտանեկան առողջաբանութեան մէջ:

---

*Անգղիացի գրագէտ, ծնաւ 1756 ին Նօթինկամի մէջ, և մեռաւ 1801 ին: Ասի կղերական վիճակը թողլով, դաստատուեցաւ ընկերական սկսեց. 1798 ին Գաղղիոյ դէմ, Անգղիացւոց ըրած պատերազմի վրայ գրելով, բանտարկուեցաւ իր աղատամիտ կարծեացը համար: Բազմաթիւ գրուածներ ունի:

Ասիկայ վկայասանութիւն մընէ որ Պ. Կ. Իւթիւճեան թարգմանելով հրատարակելէ առաջ նաև Հնդկաստան թարգմանուած է և հրատարակուած ալ:

**Տես Կիլիկիա. Թիւ 8, որոյ մէջ պիտի հրատարակուի, այլ հազուագիւտ կնոջ վարքն ու գործերն:

Արդարև Արիստոտէլ, իրաւամբ ըսած է թէ, Տղան, մարդուն հայրն է. — առողջաբանութիւնը մոռնալու չէ, այս փիլիսոփային մեծ ճիմաստ խօսքն: Արդարև մարդս կընդունի, ուղղակի առուգութեան կամ տկարութեան, առողջութեան կամ հիւանդութեան սերմն, որ իր տղայութիւնն, իրեն ժառանգ ձգած է. ասոր համար է որ, կանանց մեծ դգուշութեան, հոգածութեան, և խնամոց կկարօտի կենսոյ այս որոշեչ ժամանակը, (տղայութիւնը): Տղու մէկ օրն, և բիտասարդին մէկ ամսուան կհամապատասխանէ, իրրև ազդեցութիւն ունենալիք վերջնական կամ ապագայ առողջութեան:

Ժ. տը Մէթր* անուն փիլիսոփան, կնոջ՝ Ընկերութեան (այսինքն՝ մարդոց) մէջ ունեցած ազդեցութեան վրայ, այսպէս ըսած է թէ, "Ընշուշտ մեր սեռին (էրիկ մարդուն) կվերաբերի աղէկ Երկրաչափներ յօրինել, ինչպէս և Օրինաւորականներ, Քիմիագէտներ, Հայլն. բայց կատարեալ մարդ կոչուածն, այսինքն՝ Բարոյական Արարքը, կարելի է տասը տարուան մէջ յօրինուած է: և եթէ իր մօրը ծնկանց վրայ մեծցած չէ, մեծ դժբաղդութիւն մ'է": Ինչ որ վերոյիշեալ հեղինակն ըսած է, բարոյական մարդուն համար, մեծ իրաւամբ կվերաբերի նաև Փիլիքական Արուեստն. զի հազիւ տասը տարուան մէջ մարդուս կազմուածքը կատարելութիւն ստանալ կսկսի**: Եթէ տղան ըստ օրինի մեծնայ, առողջ և առոյգ մարդ մը պիտի ըլլայ. իսկ եթէ գէշ մեծնայ, իր տկարութիւնն անդարմանելի պիտի ըլլայ. այս ալ մեր կվերաբերի, այսինքն՝ տղան առողջութեան ճամբուն մէջ առաջնորդել. բայց իր պաշտօնին այսչափ կարևոր այս կէտն անհերի կատարելու համար, պէտք է որ աղջկանց դաստիարակութեան վրայ խորհողները, ճանան Առողջաբանութիւնն, անոնց ուսանելիք գիտութեանց առաջինն ընելու. առողջաբանութիւն գիտցող դաստատուներ հայթայթել, որոնց թիւն, օր ըստ օրէ, բարեբախտութեամբ կաւելնայ մեր մէջ, որոնք են Հայ Բժիշկք: զի Բժիշկ ըլլալու համար Առողջաբանութիւն սովրելու է, ինչպէս և Առողջաբանութեան Դաստատու ըլլալու համար Բժիշկ ըլլալու է. ուստի այս մասին բարեբախտ ենք. սովրեցնողներ, Առողջաբանութիւն Դասախօսողներ պատրաստ ունենալուիս, գործը կմնայ, Ազգային Դպրոցաց Տնօրէն եղողներուն, որպէս զի չուշանան, այս ամենակարևոր գիտութիւնն ամէն Դպրոցաց մէջ դասախօսութեանց առաջինն ընել: Խնդրոյս այս կէտն Ազգային Դպրոցաց մեծարգոյ

---

*Գաղղիացի Հռչակաւոր գրագէտ, ծնաւ 1753ին Շամպէռի մէջ, և մեռաւ 1821ին: Բազմաթիւ գրուածքներ ունի, փիլիսոփայական, քաղաքական և ուսումնական:

**Տես նիլիկիա. Թիւ 1. երես 9:

Տնօրինաց, և մանաւանդ ազգային ուսումնական ժողովոյ ուշադրութեան թողուով, չարունակենք մեր խօսքը։

Ջամիլլեան* Տիկինն ըսած է թէ, Կարգական կնոջ աղբիւրները, մօր ձեռաց մէջն են. մենք ալ կաւելցնենք ըսելով թէ, կանանց ձեռաց մէջ եղողներն ասոնք չեն միայն, այլ կպարունակեն նաև Փիլիսքական (մարմնական) առուգութեան և կորովութեան աղբիւրներն. և դաստիարակութեան մէջ այս նկատմամբ կանանց պաշտօնն աւելի բացարձակ է, քանի որ բաւական ատեն, սերտ կապակցութիւն մը, անձնական առողջութիւններն, իրենց զաւակաց առողջութեան հետ կապած է։ Ինչպէս որ, չկայ ուշադրութիւն մը, որ իր աղէկութիւնը չուենենայ. ըսէ մը, որ անօգուտ ըլլայ. խնաստուն խնամք մը՝ որ իր պտուղը չունենայ. ուսան կրնանք ըսել, և իրաւամբ թէ, Մայրական Առողջապահութիւնն ալ, առողջապահութեան ամենէն գերագոյն ու կարևոր մասն է, որովհետև, մարդը ծնած օրէն կսկսի խնամել. և եթէ կարելի է ըսել, այս կակուղ մեղրամոմին իր ուզածին պէս ձև տալ, ինչպէս կըսէ Սուրբն-Կարօնդ,** ծղրտաց, որ կսպասէ ձև մ'առնելու, և պատրաստ ու հնազանդ է ընդունած ձևը պահելու։

Այս յօդուածով ըրածնիս և ընել ուզածնիս, երևակայութիւն չէ. մենք կխօսինք, ինչը կարելի է տալ կանանց, դաստիարակութեան միջոցաւ, սովրեցնել անոնց, մայրերուն, յուսով որ նոքա ևս աչք մը նետեն մեր Ալբիկիային վրայ. իսկ կարդալ չգիտցող մայրերուն համար ևս, կխօսինք, որ իրենց օրիորդ զաւկընեն (ամէն օրիորդ դռնէ կարդալը գիտցող ենթադրելով) զատնք կարդան իրենց ևի-

---

*(Եղիսաբեթ Ջամիլլեան). Ծնաւ 1758 ին պէլգիասթի մէջ (Յ'իտալիա), ազգաթ ընտանիքէ մը, և մեռաւ 1816 ին Հառովկամի մէջ. — այս հռչակաւոր կինը, Տղայոց Դաստիարակութեան վրայ պատուական գրութիւններ ունի. — փափաքելի է որ Անգղիագէտ Ազգայնոց մին, "Նամակք, Դաստիարակութեան Նախնական սկզբանց վրայ" անուն գիրքը, Հայերէնի թարգմանէր, որ հրատարակուած է 1801 ին։

**Մեծն անուանեալ, Յունաց Եկեղեցւոյն Հայրապետներէն մին, ծնաւ 329 ին. Ամիդնի և Կ. Պոլսոյ մէջ սովրեցաւ դրականութիւնը. բաւական ատեն Հարտասանութեան Դասատու եղաւ, և միանգամայն Իրաւաբանութեան պաշտօն վարելով. բայց 357 ին աշխարհէս քաշուելով Իսիսի եղերքները վանք մը Հաստատեց, որ օրինակ եղաւ, բոլոր Արևելքի մէջ շինուած վանուց։ 370 ին ընդդէմ իր կամաց Եպիսկոպոս և Առաջնորդ անուանուեցաւ. մեռաւ 379 ին։ Ամէն տարի իր ծոյը կկատարուի Յունվարի սկիզբը և Յունիսի 14 ին։

Բազմաթիւ գրութիւններ ունի, որոնց շատերն այսօր Եւրոպական զանազան լեզուաց Թարգմանեալ են։

բենց մօրերնուն համար. զի պիտի խօսինք յաջորդաբար, թէ ի՞նչ զգուշութիւն և զո՞հ պէտք է ընէ յղի կին մը. — նոյնպէս կաթիլնոտութեան վրայ, թէ բնական ըլլայ, թէ արուեստական, թէ ուռբախտութիւն ըլլայ, թէ զո՞հ. — երբ և ի՞նչպէս կաթէն կտրելու է. — չմոռնալով հետևաբար տղայոց առողջութիւնն անվտանգ պահպանմէն տեսակ խնամքները. — և վերջապէս նոցա, տղայոց բարոյականութիւնը մաքուր պահելու եղանակն. ինչպէս կըսէ, Պուշատա, մեր Աստղաբան Դասատուն, թէ, բարոյականութ. ֆիլէյէն յօրինողը։

Շարունակելի։

ԿԱՏԱՐ։

Ընդհանրութիւնք վասն ձևաչափի*։

2. Ընկերական յարաբերք։

Պէտք ունէի, սրտիս այս ձայնը դուրս հանել, և յուշնել մարդկային ընկերութեան մեծութիւնը, մի՝ իր բնութեանը, բազմամ՝ անհատից մէջ, երկնային ընկերութեան մեծութեան առջին, որ նա ևս միանգամայն մի և յոգնակի, Ինչանք հիմայ՝ այս բարձրութիւններէն**։

Մարդկութիւնը մեծ բան մ՚է. բայց վերջապէս խոստովանինք ևս թէ, միջոցին և ժամանակին մէջ իսկութեամբ տկար, անկարող և երկդիմի ընկերութիւն մ՚է։ Մենք, ժամ. ը դարուն մարդիկս, նախնեաց և միջին դարուն ցնորից որդիքը չենք. և հետևաբար չենք մտածեր. Հռոմայեցի կամ Քրիստոնեայ Աճսարի տիեզերական պետութիւն մը կազմել։ Մարդկութիւնը չկրնար իրական, արտաքին և շօշափելի միակ ընկերութեան մը ամիսուիլ։ Ասոր մէն է այն յոգնակի ձևն, որ պիտի առնէ Քրիստոնեայ ընկերութիւնն այս աշխարհիս մէջ։ Ըստ յոգնակի ձևն, որ արդէն ըսի, այն է Ընտանեկան ընկերութիւնը, կամ Ընտանիքը. Քաղաքական ընկերութիւնը, կամ Ազգն. և Երկիրն որ զանի կկազմէ և կպսակէ, և վերջապէս Կրօնական ընկերութիւնը կամ Եկեղեցին։

Նախ՝ Ընտանիքը, զի առաջինն է ժամանակաց կարգին մէջ. և

---

*Տես Սիլիկիա. Թիւ 6. երես 197—203։
**Տես Սիլիկիա. Թիւ 6. երես 202։

եթէ ներելի է ինձ ըսել, ամենէն վերագոյնն, ամենէն կարևորն է՝ ընտանեկան ընկերութիւնը, մարդուն առ մարդը բնական ընկերութիւնն, այն ընկերութիւնն է, առանց որոյ երկու միւսներուն գոյութիւնն անկարելի է, և որ երկայն ատեն, կարող եղաւ մեծ տեղ բռնել։

Ա՛րդս, այս աշխարհին մէջ մնալով, երկու մեծ հրաշալի օրինաց կ՚հանդիպի, կրնամ ըսել երկու անդիմադրելի օրինաց. օբէնք ակնի և օբէնք մահուան. — սեռից օրէնքը, նախ, որ զանի (մարդը) կբաժանէ, իր իսկական բնութեանը մէջ. մանաւանդ իր բարոյական բնութեանը մէջ. յետոյ՝ մահուան օրէնքն, որ զանի կսահմանէ իր կարճ տևողութեանը մէջ։ Ա՛րդս, բաժանեալ իր սեռովն, և սահմանեալ իր մահուամբը, կարող պիտի ըլլայ յաղթել այս երկու յարձակմանց. և պիտի յաղթէ, ընտանեայ սրբազան և բարձր կապովն, այսինքն ամուսնութեամբ։ Այժմ կխօսիմ միայն բնական մարդուն վրայ. կարելի է որ օր մ՚ալ այն փառաւոր խոստումն վրայ խօսիմ, բայց ինչ որ ալ է, միշտ խոստումնէ մ՚է, ըսել կուզեմ Քրիստոնէական ամուսնութեան վեհն որ է նկարիրնը։

Ա՛րդս, ըստ օրինաց բնութեան, ամուսնացեալ մարդն իր կնոջը քովն, իրեն մէկ պակասն, իր մտաց և սիրոյն պատուական մասը կգտնէ, ''ոչ է բարւոյ մարդոյն միայն լինել''։ Երկուքը պիտի ըլլան՝ մի սիրոյ մէջ, մահուան դէմ դնելու։ Այս է ամէնը, զի այս սիրով, ամուսնութեամբ, մարդս՝ իր գոյութենէն, ոսկորներէն և միսէն, մանաւանդ իր բանական մասէն, իրեն նման ուրիշ մ՚ալ, ծնելու գաղտնիքը կունենայ, իր արեան, իր անուան; իր աւանդութեանց շարունակող մը, որդի մարդոյ մը, մարդ մը, որ երկրիս վրայ իր առաքելն աշխարհային անմահութիւնը պիտի շարունակէ։ Մուսին և հայր, մարդս այն ատեն կըլլայ կատարեալ, մարդկային ընկերութիւնը կը գոյանայ։

Այսպէս է որ մարդկութիւնը, մարդկային սերունդը, դարուց ի դարս տևած է։ Փնտռենք սկիզբն. որոյ համար, կբանամ մարդկային այն գեղեցիկ գիրքն, Աստուածաշունչ կոչուածը, միակ գիրքն, որ անսած է մեր սերնդեան օրօրոցէն, մեզ նման մարդոցմէ, բայց, Աստուծոյ ներշնչեալ մարդոց ձեռօք գրուած գիրքը։ Կանանք առաջին երեսները, մարդկային սեռին արշալոյսին բեկբեկուն շառաւիղաց և գեղիւնեներուն երեսներն, որոնց վրայ պատմութիւն մը միայն կգտնենք, ընտանեաց պատմութիւնն, Եդեմական ծաղկեալ, զարդարեալ օրօրոցէն մինչև Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ վրաններն։ Ընդ նոսին մէջ միայն ընտանիքը կտեսնեմ, և որոյ համար գոհութիւն կու-

տամ Աստուծոյ. զի չեմ գիտեր Թէ, մարդկային գրոց մէջ, այսպիսի վսեմ ու մաքուր երեսներ կգտնուի՞ն: Որ էր այն ժամանակը քաղաքական ընկերութիւնն: Որ էր ժողովուրդն, որ էր հանրապետութիւնն, որ էր պետութիւնն: Այսոնց և ոչ մէկին խօսքը կայ: Ընտանեաց Հայրն էր Թագաւորն — սէր և կրօնք ի սկզբանէ կային ընտանեաց մէջ. բայց որ էր կազմեալ Եկեղեցին. — Քահանայն ալ, գարձեալ նոյն ինքն ընտանեաց Հայրն էր: Ողջոյ այս մեծութիւններուն, իր (հօր) ձերմակ մազերուն գերագոյն մեծութեանը մէջ կպարունակէր: Արանին տակ մարդկային սեռին կհրամայէր, կպաշտէր զԱստուած, Երևելեան համաստեղութեան տակ: Ընտանիքն, այս է ահա, աշխարհիս երեսն ապրող մարդկային սեռին սկիզբը:

Դեռ մինչև այսօր, եթէ մտիկ ընեմ ճամբորդաց գեղեցիկ պատմութեանց, կլսեմ Թէ, դեռ այսօր ալ, ընտանիքն է որ կտիրէ Ասիոյ բարձր լերանց այն ընդարձակ գագաթներուն վրայ, որոնք իրաւամբ կոչուած են մարդկային սեռին ամբարն: Երբ քաղաքակրթեալ մարդկութիւնը կապականի. երբ շատ մտիկ կընէ իմաստակներուն. երբ իր միտքը բաղդովին կպղտորէ, և իր սիրտը մաքէն ետքն. երբ վերջապէս ապականութիւնն ու մոլութիւնն այն աստիճան հասնի, որ ամէն այնուհետև սոյն ժողովրդէն որ և է աղեկութիւն մը յուսալ կամ տեսնել անկարելի ըլլայ, Մարգարէին ըսածին պէս, Աստուած կը հրամայէ, Ասիոյ այն բարձր լեռներէն, երիտասարդ, առողջ ժողովուրդներ իջնալ, իրենց աննուաճելի և վայրենի ձիերուն վրայ հեծած: Այն գոռոզ կենդանեաց անարատ կամովը կգինովնան, որք կռնակներուն վրայ, իրենց հաւատարիմ ընտանիքներն, և անոնց աստանդական բնակարանները կբառնան: Նանալով ու գոցելով յաջորդաբար իրենց վրանները, կուգան իրենց սպասող Քրիստոնէութեան անմահ լուսովը լուսաւորուելու. — այս ժողովրդոց անունն ըլլայ Թաթար, Մոնկոլ կամ Հունք. Հոգ չէ: Ընդհանրին կամ ապագային մէջ, եթէ կարօտ ըլլանք գժբաղդաբար նոր սերնդի մը, նոքա պիտի գան նոր լուսաւորութիւններ ստեղծելու: Այո, ուրեմն, սոյն ժողովուրդներն, որոնց պատմութիւնն ըրին ինձ, հոն գացող ճանապարհորդք, նոքա ոչ Հայրենիք, ոչ Քաղաքական ընկերութիւնք, ոչ Եկեղեցի ունին. կրօնքնին ալ անկարծր և խառնիխուռն: Այլ ունին ընտանիք, այս առաջին ընկերութիւնն, որ միւս ամենուն տեղը կբռնէ, և ընտանիքն ալ կպահէ, նախախնամական սոյն բարձրութեանց վրայ, միշտ երիտասարդ, միշտ առոյգ սերունդներ:

Քաղաքական ընկերութիւնը, ասոր (ընտանեաց) կյաջորդէ, ինչ-

պես ծնունդ առաւ, ջրհեղեղէն ետքը, մարդկային սեռին ցիրուցան եղած տեղն. ըլ երբ ընտանիքները բազմացան, շահ, իրաւունք երեւան եկան. մարդիկ ըսին այն տեղն, Բերրահամու և Ղոտի հովիւներուն նման. որք երբ կռուեցան իրարմէ բաժնուելով, երկրիս երեսը ցրուեցան. կամ ընդհանուր, միտնչենաւոր միջնորդական դատաւորութիւն կազմելով, քաղաքական ընկերութեան ծնունդ տուին, այսինքն Երկրին, այն երկրորդական՝ բայց խիստ կարեւոր ընկերութիւնն, ինչպես ըսի վերը: Ասոնք սկսան կազմել միշտ նոր գրագիտք, ընդհանուր ընկերութիւնը, մասնաւոր ընկերութեանց հետ շփոթելով. —ըլ ընկերութիւն ըսելով պիտք է հասկնալ, մարդկութիւնն, որ մարդկային սեռին չափ հին է:

Քաղաքական ընկերութիւնն, Ընտանիքի և Եկեղեցւոյ նման ընկերութիւն չէ. ասի իր ժամուն կուգայ, երբ այս մեծ յառաջադիմութիւնը կատարելու համար, նախանձամական հասունութիւնը կուգայ: Ունիք չունիմ քաղաքական ընկերութեան, բարբարոսութեամբ և մեծ ոճրագործութեամբ խառնեալ ծնունդները փնտռելու: Այլ այս գաղափարին ծնունդն, ընտանեաց տէր բոլոր հայրերուն է, որք միացան ընդհանուր կառավարութիւն մը կազմելու, որ և է ձեւով. կառավարութիւն, որ նախ կոշտ, սակայն սրբազան է. որովհետև Աստուած՝ ըսար է այն ամէն կառավարութեան, որ նպատակ ունի, ոչ թէ անհատի մը կամ ընտանիքի մը իրաւունքներն աւելցնելու կամ ջնջելու, այլ փոխադարձ յարաբերութեանց մէջ, ամէն իրաւանց գործածութեան եղանակը կանոնաւորելու, արդարութեան պաշտպանութիւնն ընկերութեանց վրայ տարածելու, և եթէ պէտք ըլլայ, օրինաց ոյժը մէջ բերելու, կամ քաղաքացւոց աղաւտութիւնը, կարգն ու խաղաղութիւնը վրդովող արտաքին պատճառներուն դէմ դնելու:

Ահա քաղաքական կառավարութիւն: Յետոյ, ջրհեղեղէն շատ ժամանակ ետքը, մարդկային սերունդն այն վիճակին հասաւ, զոր Պօղոս Առաքեալ կկոչէր ժամանակին լրութիւն: Աստուած՝ յառաջադիմութեան օրինաց կհետեւի. բայց այս յառաջադիմութիւնը քայլ առ քայլ կընթանայ, որովհետև ժամանակն յառաջ չկրնար երթալ: Երբ մարդկային սեռը վերջին հասունութիւնն ստացաւ, Քրիստոս աշխարհ եկաւ և նոր ընկերութիւն մը երեւան եկաւ, Ընտանիքէն, Քահանայապետութենէն, և Կառավարութենէն աւելի ընդարձակ ընկերութիւն մը, որ է Կաթողիկէ Եկեղեցին. տարբեր հին Աբրահամական, որ էր արդարեւ ճշմարիտ Եկեղեցին, բայց հին ժամանակաց Ազգային Եկեղեցին, տարբեր ևս Քահապետաց վրանէն ալ, որ էր հին ժամանակաց ընտանեկան Եկեղեցին: Կաթողիկէ (ընդհանրական) Եկեղեցին,

մարդկային ընկերութիւնն է. և եթէ օրմը, ինչպես յոյս ունիմ, շատ մոլորութիւններէ, մաքառումներէ ետքը, մարդկութիւնը միութեան մէջ նորէն կազմուի, այն պիտի ըլլայ կաթողիկէ Եկեղեցւոյն մէջ։ Ըստ իրաւանց, ամէն Ազգերն ալ այս Եկեղեցւոյն կվերաբերին, որ ջնջեց Ազգերն իրարմէ զատող բարբարոս անկախութիւն և նախանձ լուսաւորութիւն ունեցող այն բաժանումները։ Ի շնորհս այս Եկեղեցւոյն, չկայ ալ այսուհետև ոչ իրարու յաջորդող Յայտնութիւններ, և ոչ ալ զանազան և ազգային փիլիսոփայութիւններ, ինչպես երբեմն Աղբիւրեցւոց և Յունաց մէջ. ասոր շնորհիւ, ալ ոչ տէր, և ոչ իսկ ծառայ կայ. և չեմ կրնար ինքզինքս բռնել և չզարմանալ, երբ կը տեսնեմ այսօր այնպիսի գրիչներ, որք ինքզինքնին որչափ ալ ճշմարտասէս ձևացնեն, սակայն նախանձ են, կամ նախապաշարմանց առաջնորդներ, — ըլլ չեմ ուզեր ատելութիւնն, — երբ կտեսնեմ կըսեմ, նախապաշարեալ գրիչներ, որք կզըպարտեն զԵկեղեցին, ըսելով թէ նա գերութիւնը կպաշտպանէ, մոռնալով Սուրբ Պօղոսին ըսածն, յանուն Աստուծոյ, ըղը և մենք, ամէնքնիս ալ, իրմէ ետքը կրկնեցինք, «ոչ ծառայի և ոչ ազատի խտրութիւն կայ»։

Այսպէս է ահա կաթողիկէ Եկեղեցին, մի Աստուած յերկինս, և մի կրօնական ընկերութիւն յերկիր։

Կմնայ ինձ, մէկ խօսքով, յայտնել Ընտանեկան Ընկերութեան կարևորութիւնն երկու միւսոց դէմ, այսինքն Քաղաքական Ընկերութեան և Եկեղեցւոյն։

Պէտք ունիմ նաև ձեզ մեկնել թէ ինչու համար, այսպիսի ժամանակի մէջ, երբ Եւրոպայ տակնուվրայ կըլլայ կառավարութեանց վերահսկմամբն, երբ պատերազմը հաղիւ ներկայիս կհանգչայ, ու երանի թէ արդէն ապագային համար չպատրաստուեր, ինչու ես, կրօնաւորս, առանձնութենէս եկած*, կուգամ ձեզ հրաւիրել այսպիսի քաղցր և խաղաղ տեսարանին, պիտի ըսեմ, գրեթէ ընտանեաց այս ծոցին։

Շարունակելի

ՀՆԱՐԻՔ ԵՒ ԱՐՏԱԴՐԻՔ

Ընդհանրապէս, չէ ըլլ հաճելութիւններէ, այլ ամենէն ապերախտի իրճիլներեն կելլէ, արհեստական ձեռքերէ ընդունելը։ Սովորաբար ներողութեայ հարցնողներէ չէ, այլ խոչընդոտ առաջ, և շատ անգամ փոյթով ու ծառայով անցորդներն են, ան ըլլ գանազան պարտականութիւններով զբաղեցողներն։

Խաղաղ Թեմլըը։

*Չի հայր Հիասէնթ վանական է։

գիտութիւն, էնթուզիազմ՝ բանասիրեալ-մոլեռանդութիւն է. — ամենամեծ էնթուզիազմը, բանասիրեալական խորհրդով մը ձեռնարկը եղաւ. — ապեղծելու համար բանասիրեալ ըլլալու է։

Է. Մ. Պալասյան։

Աշխարհիս ամենէն մեծ արհեստները շարժման մէջ դնողները, էնարոզք են. Ընկերութիւնը՝ նոցա կապարատուրի ոչ միայն օգտակարին, այլ և հաճելւոյն, և աւելիին. ի շնորհս նոցա տաղանդին և աշխատութեանցն է, որ հետզհետէ մարդկային կեանքն աւելի կդիւրանայ և կբարւոքի։ Անունդնիս, բնակարաններս, կահկարասիքնիս, ապակին՝ որով տուներնիս ցուրաէն պատսպարելով, միանգամայն կըլուսաւորենք. կաղն՝ որով գիշերուան խաւարը, փողոցներուն մէջէն կանհետանայ, կառք՝ երկաթուղիք՝ նաւք և շոգենաւք՝ որք ծովուն և ցամաքին հեռաւորութիւնները կմոռցնեն, ամէն տեսակ մեքենայ՝ գործիք՝ ևայլն՝ բոլոր ասոնք երկրագնտիս 1,000,000,000 ի չափ բնակչաց մէջէն միայն մէկ քանիներու հաստատամիտ ու յարատև աշխատութեան արդիւնքներն են, որք կկոչուին էնարոզք։ Արդկութիւնն այնքան աւելի երջանիկ կըլլայ, որքան որ արուեստից ու գիտութեանց մէջ, նոցա գիւտերը բազմանան. և որքան որ աւելնան նոցա աշխատութեանց արդիւնքներն, այնքան ալ կաւելնայ մարդոց բարօրութիւնը։

Ներկայ սերունդս, նախնի սերնդոց ճարպիկութեան և գիտութեան մէջ ըրած ամէն տեսակ յառաջադիմութեանց ու գիւտոց ժառանգորդն է. և լուսաւորութիւնն, որով աղգաց միայն մէկ քանիները կրնան պարծիլ, ուրիշ բան չէ, այլ դարուց ի դարս հաւաքուած և աշխատութեամբ ձեռք ձգուած, մարդկութեան բարօրութեանն օգտակար գիւտոց հետևութիւնն, արդիւնքը կամ պտուղն է։ Ըստ ճշմարիտ է Ֆինլառէթ Շաուի ըսածը թէ, "ճշմարիտ ճնարոզն է մարդկային ազգը". կերևի թէ բոլոր սերունդները միացնելու, և մարդկութիւնը նաւանդ ապացուցանելու թէ մարդս, ընկերութեամբ և միութեամբ կարող է, "նախանձամոլութիւնն այնպէս հրամայած ըլլայ թէ ամէն մէկ էնարոզ, լուծուելիք խնդրոյն կամ ընելիք գիւտոյն միայն մէկ բաղը գտնէ, և թէ ամէն մեծ գաղափար, անցեալին համառօտութիւնն ըլլայ, ինչպէս որ պիտի ըլլայ, և է ապագային սերմն։ Արդարև, շատ քիչ անգամ կտեսնուի թէ, որ և է հնարք կամ գիւտ մը, մէկէն աւելի մարդոց չվերաբերի։ Ընդ հակառակը, կտեսնենք թէ, էնարոզք իրարու կյաջորդեն, իրարու ետև, գիւտոյն թևերը

ձեռք կ՚ձգեն · երբեմն , աւելցնելով , շատ անգամ միայն գտածնին ծախելով , մինչեւ այն օրն , որ վերջապէս մարդ մը ծնի , կարելի է աւելի հանճարաւոր , իր բոլոր նախորդներէն , որ իր ժամանակին պիտոյքներն յագեցնելու նպատակաւ , մինչեւ իր օրը , ջիրուցան ձգուած թևերը միասորէ , անցեալին անյաջող և յաջող փորձերէն գանձ մը յառաջ բերէ , և յաջողի վերջապէս բազմաթիւ ճիգերու պսակն ընդունիլ , գիւտն ըստ ամենայնի կատարելագործելով : Այսպէս գտաւ Նեվտոն՝ քարշողական զօրութեան օրէնքները · այսպէս հնարեց Ֆէյմս Ուաթ շոգենաւն · այսպէս գտնուեցաւ և հնարուեցաւ երկաթուղին , որոյ համար Ռօպէրթ Սթէֆընսըն ըսած է թէ , "երկաթուղին , ոչ միայն մէկ մարդու մը գիւտն է , այլ խումբ մը մեքենագիտաց" : Ուրիշ Ընարող մ՚ալ , Ֆօլէֆ Պուամահ , ըսած է թէ , "ես մէկ ամէն մէկ գիւտին ճշմարիտ Ընարողը՝ փնտռել հարկ ըլլայ , անկարելի է գտնել թէ , որ ժամանակի մէջ ծնունդ առած է , և ով եղած է և է առաջին Ընարիչը" :

Պէտք չէ մոռնալ թէ ամէն արհեստ , մարդոց պէս , ըն Ա՛ուրէ է ու ֆուրձէ ղերէէ , քայլ առ քայլ կ՚յառաջանան . այս մասին խիստ իրաւացի է Լորտ Պաքոնի ըսածը թէ , "մենք , մարդիկս , հակամիտ եալ ենք միշտ , որ և է գիւտոյ մը առաջին աշխատողները մոռնալ , ու միայն վերջին աշխատողին յատկացնել գիւտոյն բոլոր փառքն ու պատիւը" : Ճշմարիտն այն է թէ , շատեր կաշխատին որ և է արհեստի մը գաղտնիքը գտնելու , զոր կապացուցանեն ամէն գիւտոց և հնարից պատմութիւնները : Առաջին փորձ մը , մարդուս տղայութեան կնմանի , տկար , կասկածոտ և տարտամ , որ հասնութեան տարիքներուն մէջ կատարելութիւն և զօրութիւն կստանայ : Եւ փորձն ալ , մարդուս նման չմեռնիր , այլ ընդհակառակը , փորձ փորձի վրայ գիշերելով , մարդկային սեռին համար , կարողութեան և հարստութեան , թանկագին գանձ մը կըլլայ : Այնպէս միշտ անկորուստ , և դաս սերնդոց յաջորդութեան , կաճի օր ըստ օրէ , յայտնելու համար միանգամայն , մարդկային սեռին տկարութիւնն ու կարողութիւնը , նուաստութիւնն ու մեծութիւնն : Եւ ոչ միայն մենք , որ կապրինք այսօր , որ մեր նախորդաց աշխատութիւններովը ծնունդ առած արդիւնքները ժառանգած ենք , ինչպէս արհեստական , և ուսումնական գիւտք , գործիք , մեքենայ , կամուրջ , ջրանցք , երկաթուղիք , և այլն , այլ ժառանգած ենք նաև , մեր արիւնովն ու ուղեղովը մեզ փոխադրուած բնական յատկութիւնները , որք նախորդ սերնդոց աշխատութիւններովը ձեռք ձեռքի տուած և աւելի զարգացած ըլլալով , մեր բնական ժառանգին ամենակարևոր մասը կ՚յօրինեն :

Սակայն, յաւալէ է որ, գիւտեր ընողներուն մեծագոյն մասին անունն ու յարգը մոռցուած է. — ամենէն հռչակաւորներուն անունն ու յիշատակը պահուի. անոնց՝ որք գիւտով մը պատմութեան մէջ տեղ բռնած են, ինչպէս այն համբաւաւոր անձինքը, զորօրինակ, որոց փառքը, սոյն հսկայ կարողութեան, ըզգննուէն, կատարելագործուածութեան կցեալ է։ Սակայն, առանց անուան, հարիւրաւոր գործաւորք, բայց ոչ առանց տաղանդի, այս հրաշալի մեքենային կազմութեան մեծ կատարելութիւններ ըրած են երբեմն երբեմն, ինչպէս անոր գործածութիւնն աւելի դիւրացնելու և ուժն աւելցնելու մասին։ Կան նաեւս, խումբ մը գիւտեր ալ, երկրորդ կարգի, և որք, ամէնն ալ իրենց տեսակին մէջ, իրենց կարեւորութիւնն ունին. գրպանուս (ճեպ) մէջ կրած ժամացոյցը, զորօրինակ — որոյ պատմութիւնը մոռցուած է. այնպէս որ, որքան որ մեզ ձգուած գանձերը ժառանգած ենք ալ նէ, միայն զանոնք կգործածենք, առանց գիտնալու մինչև անգամ մեր բարերարաց շատերուն անունները։

Շատ գիւտող ծնունդն, եթէ փնտռուի, մարդկային սերունդին չափ հին է։ Առաջին գաղափարն, անծանօթի մը ուղեղին մէջ ծնունդ առած, անմիջապէս շատ գլուխներու մէջ կմտնէ, և վերջապէս օր մը իր ամէն կատարելութեամբն երեւան կելլէ, երբեմն դարերէ ետքը։ Ա՛էկը միայն գաղափարը կծնի, միւս մը զանի կընդարձակէ, և հետզհետէ յաջորդաբար զանազան ձեռքերէ անցնելով, բոլորովին կատարելագործեալ գործածութեան կյանձնուի։ Ուստի, եթէ ամէն գիւտին տէրը գտնելու ելլենք, պիտի գտնենք թէ, ոչ առաջինին և ոչ վերջինին կվերաբերի, այլ ամենուն։ Շատ գիւտեր ալ դարերէ ի վեր անծանօթ կմնան, բայց աւելի հանճարաւոր մը զանի իր աշխատութեան նիւթ ընելով ըստ ամենայնի կկատարելագործէ, այնպէս որ յետ այնորիկ կարելի կըլլայ զանի գործածել, և մարդոց բարօրութեան օգտակար ընել։

Կան գիւտեր ալ, որք պէտք եղած ժամանակէն առաջ կծնին. այս կպատահի շատ անգամ այն ազգաց և քաղաքաց մէջ, ուր միայն մէկ քանիներ մեծ յառաջադիմութիւններ ընելով, ըրած գիւտերնին ազգէն կամ քաղաքէն քաջալերութիւն չգտնելով, չեղածի նման անծանօթ կմնայ. բայց վերջապէս կուգայ այն ժամանակն, որ ուրիշ մը զանի նորէն ձեռք առնելով, գիւտն իր յարգն ու ընդունելութիւնը կգտնէ. ասոր համար է որ, այսօր Եւրոպիոյ քաղաքակրթեալ աղգաց մէջ, յաճախ կտեսնուի, այսպիսի օրինակներ. ինչպէս ըսած է Լուի Նաբոլէօն, թէ, "ժամանակն առաջ ծնող ամէն տեսակ գիւտք, կամայ ակամայ անծանօթ մնալ կպարտաւորին, մինչև որ հա-

բարակաց յառաջադիմութիւնը, նոյն դիւտին կարևորութիւնը հասկը-
նալու կարողանայ" : Ահա, այս է առաջին և միակ պատճառ շատ մը
Նարողաց թշուառ մնալուն. զի խիստ քիչ Նարողք իրենց նպատա-
կին կհասնին. վճռակնին կըսարսռի, երբ դիւտին արդիւնքը վայե-
լելով. բայց ասոնց թիւն այնքան փոքր է առաջիններուն հետ բաղ-
դատելով, որ ճշմարտութեան դէմ խօսած չենք ըլլար, եթէ ըսենք
որ, Նարողաց վճռակն ու կեանքն, ընդհանրապէս թշուառութեան
մէջ կանցնի. ասոնցմէ շատերը փոխանակ պատիւ և համարում ստա-
նալու, հասարակաց ապերախտութեան և անարգանաց արժանի եղած
են, և մեռած են յետին խեղճութեամբ. եթէ յաջողին իրենց գիւ-
տերը գործածելու, անհամար թշնամիներ պակաս չեն ըլլար. ընդ-
հանուրին չար նախանձը, ըմպարտութիւնը, չարութիւնն, և այլն, նոցա
կեանքն ու քաջալերութիւնը կթունաւորեն.

Իրաւ է որ շրջենաւին, մեքենայից թագուհւոյն, գիւտը մեր դա-
րուն կվերաբերի, բայց պաշտպանը շատ դարեր առաջ ծնած է. շատ
մը ուրիշ գիւտոց նման, այս ալ աստիճան առ աստիճան, իր այսօր-
ուան կատարելութեան հասած է.

Ինչպէս, կերևի թէ, Ալեքսանդրացի Հերոն,* շոգիին թ՛նչ
մեծ ծառայութիւն կրնայ ընել, խիստ աղէկ հասկցած ըլլայ. ասկ
կհաստատուի, մանուկ գիւտէն անմիջապէս ետքը, հրատարակած յա-
ջող օդէ անուն գործուը. Նոյն միջոցին բոլոր Իտալիա, մեծ ու-
շադրութիւն ըրին այս գիտնականին գրածներուն, զի մէկ տարուան
մէջ նոյն գիրքը 20 անգամ հրատարակուելով, ուրիշ ալ օտար լեզ-
ուաց թարգմանուեցաւ. (Հայուն համար հրաշք եանհասատալի պէս
է գրքի մը 20 անգամ տպուիլը). Հերոնի առաջին հետևողներն ե-
ղան Ալիան-Պաթիսթա տէլլա Փորթա, Պռանքա և Սալոմոն ոը Քոս.
Այս վերջինը Նորմանտիա ծնած է, սակայն ճարտարապետութեան
արհեստն Իտալիոյ մէջ սովրեցաւ ինչպէս նաև շոգիին յատկութիւն-
ները, զի Հերոն յաճախ կյիշէ այս անունը. Մեկ քանի տարի
Վաղղիա բնակելէն յետոյ Անգղիա գնաց, հոն Վալէ կամ Ուէյլսկ
Իշխանին հրամանաւոլը Ուիլմնտի պալատին պարտեզները զարդարող
աչքն տեսակ զարդուց, աղբիւրներու, ջրանցքներու և քարայրներու
պատկերները գծելու. Միանգամայն, Անգլիսաբէթ Իշխանուհւոյն
պատկերհանութեան դասատու կարգուեցաւ, և երբ ասկ ամուսնա-

---

*Մեքենագործ և մաթեմատիքագէտ, ծնաւ Ա՛Աղեքսանդրիա 120ին
Քրիստոսէ առաջ: Բնական գիտութեան վերաբերեալ գրութիւնները
ունի, որոնցմէ մեկ քանիները միայն մնացած են:

ցաւ, միատիպ Դանիմարկիա գնաց, ուր Էհրլիպեկի պարտէզներուն և պալատին պահապան անուանուեցաւ։ Ան գրեց "ընթացք ընդ-դէմ պարծանքին" անուամբ գիրքն, որ, 1615ին հրատարակուեցաւ Փրանքֆորթի մէջ։ Ասոր կրակի միջոցաւ ջուրը վեր հանելու համար առաջարկած դրութիւնը, Էհրնի կարծեաց մեկ մասին կհամապատասխանէր. սա տարբերութիւնն ունէր որ, ասի փոխանակ շոգի գործածելու, իրրև մղիչ, որևէ հեղուկ, մի և նոյն գործը կրնայ տեսնել կըսէր։

Էհրնի, Պանքայի, և Սալոմոն տը Քօսի, այս գաղափարն, անկորուստ չմնաց. ղի ասոնց յաջորդող շատեր աշխատեցան, և ամէնքն ալ իրենց աշխատութեամբն աւելի կատարելագործեցին։ Ընդհակառակ բանտարկեալ Մարքիզ Վորսէսթըը Վարբիլն, երբ Նյոտոնի Աշտարակը լանտարկեցին, քաղաքական մտանութեան մը կասկածի առթիւ, բոլոր կեանքը, շոգիին զանազան յատկութեանց և գործածութեանց վրայ աշխատելով անցուց. ուսկից ազատուելէն անմիջապէս առաջ, շոգիով գործող մեքենայ մը շինեց, զոր շատ տարիներ գործածեցին, Թամիզ գետէն ջուր հանելու։ Բայց սոյն մեքենային մեկ քանի պակասութիւնները պատճառ եղան, անոր գործածութիւնը մոռցընելու. և 30 տարի ետքը, Թոմաս Սէվըրի, սոյն մեքենային պակասութիւնները գանելու վրայ աշխատելու ատեն, ինքն ալ ուրիշ մեքենայի մը գիւտն ըրաւ 1698 թուականին, որոյ առաջին օրինակը, դեռ մինչև այսօր պահուած է, Նյոտոնի մեքենայից Միւզէին մէջ։ Սակայն ջրհանն ալ, շատ տարիներ Անգլիոյ մեքենագիտաց վճռաբանութեան նիւթ եղաւ. և նոյն միջոցին Նյոտոն աքսորեալ Բրոմէսդան Գաղղիացի մը, Տոքթոր Տընի Նաբէն, շատ գիրքեր հրատարակեց, և անհամար փորձեր ըրաւ, շոգիով գործող մեքենայից վրայ։

Տընի Նաբէն, Պլուա ծնաւ, ուր դարուն մէջերն և բժշկութիւն ուսուցեալ, Փարիզ մեծ համբաւով շատ տարիներ բժշկութիւն ընելէ ետքը, հռչակաւոր Էիւկէնոյի քով, բնական գիտութեան և մեքենագործութեան աշխատիլ սկսաւ։ Նոյն միջոցին, Գաղղիացի Պրոթէսդանդներն, ամենուն անարգանաց և արհամարհանաց նիւթ, և Գաղղեա նահանջն անկարելի ըլլալով, 1681ին որոշեց, ինչպես իրեն հետ, հազարաւոր կրօնակից Գաղղիացիներ, Անգղիա քաշուիլ, ուր մեծ պատուով ընդունուեցաւ, բոլոր գիտնականաց դասէն, մանաւանդ հռչակաւոր Պոյլէն, որոյ պաշտպանութեամբը, քիչ ժամանակէն, Նյոտոնի Ընկերութեան անդամ կոչուեցաւ։ Նաբէն քաջալերուած, աշխատութիւնը կրկնապատկելով, բազմաթիւ գիւտեր ըրաւ շոգիովքայ, որոնց առթիւ բոլոր գրածները, մինչև այսօր մնացած է, սոյն

Ընկերութեան արձանագրութեանց մէջ , (զի Ընկերութիւնը կաւէ այսքան դարերէ ի վեր · ահա հրաշք մ'ալ Հայոց համար) :

Իր համբաւը բոլոր Գերմանիա տարածուելով , 1687 ին , Մարպուրկի Համալսարանի Մաթեմատիքական գիտութեանց դասատուութեան կանչուեցաւ , զոր սիրով ընդունեց · ուր դարձեալ շարունակեց աշխատիլ իր գիւտին կատարելագործութեան , և հրատարակեց զանազան յօդուածներ Գերմանական և Ընդհանրին օրագրոց մէջ : 1687 ին , Նաբէն եղաւ , առաջին անգամ , սոյն Ընկերութեան (Ընդհոյ) տեղեկագիր մը մատուցանող , որոյ մէջ կառաջարկէր , թէ ամէն տեսակ հանքային ու զանազան աշխատութեանց մէջ , ջրով գործող մեքենաները , շոգիով գործեն :

Ընդհնա գտնուած ժամանակը , Նօպերթ Իշխանին շինած նաւի մը , Թայմզ գետին վրայ եղած առաջին փորձին ներկայ գտնուեցաւ , որոյ անիւները ձիերով կդառնային : 1698 ին , կրկին Լընտոն ճամբորդութեան միջոցին , երկրորդ փորձի մ'ալ ներկայ գտնուեցաւ , ուրոյ անիւներն այս անգամ մարդիկ կդարձնէին : Սվէրի նոյն տարւոյն մէջ , Լընտոնի Ընդհանրի Ընկերութեան ներկայութեանը նաւի մը առաջին փորձ մ'ընդաւ , որոյ անիւները շոգիով դարձան : Այս փորձին վրայ , Նաբէն , իր գիւտը , Սվէրիի գիւտին հետ միացնելով , նոր մեքենայ մը շինելու գաղափարը ծնաւ , որպէս զի ոչ միայն նաւին անիւները , շոգիին զօրութեամբը դառնան , այլ մանաւանդ նաւն ալ , ուղիղ գծի վրայ ճամբայ առնէ , ընդդէմ հովուց և ջրոց ընթացքին : Նաբէն , Մարպուրկի մէջ , բոլորովին հաստատուելով , իբրև Դասատու , ինչպէս որ վերն ըսինք , ամբողջ 15 տարի աշխատեցաւ , ամէն տեսակ դժուարութիւններով՝ իր գաղափարին համեմատ շոգենաւի մը մեքենայ շինել , որ արդարև իր ուզածին պէս քալեց · բայց կուզեր որ Լընտրա խաւրէ , հոն փորձելու համար : "Կարեւոր է" , կգրէ , 1707 Յուլիս 7 ին , Լէյպնիցի Թէ , "իմ նոր շինած նաւս , Լընտոնի նման նաւահանգիստի մը մէջ փորձուի , ուր (կըսէր) , ասոր նման աւելի մեծ կրնայ շինուիլ , վերջին որոշում մը ունենալու համար" : Նաբէն մեծ դժուարութիւններ ունեցաւ իր նաւը Ֆուլտէն Ա Էզըրի (Մունտընի) մէջ անցնելու հրամանն ընդունելու · բայց վերջապէս երբ յաջողեցաւ Մունտըն անցնելով , անմիջապէս կտոր կտոր ըրին : Արեւելահռադաբար շինածին օրինակը գաղտնի պահել յաջողելով , Ռասըլ խաւրեց , ուր այս ալ կտոր կտոր ըրին 1806 ին , որ տեսնն Գաղղիացիք կգտնուէին* : Սակայն կըսուի Թէ , նոյն նաւին ամբողջ պատկեր-

*Այս մեքենային միայն մէկ կտորն , այսօր , Էհնիշէլ անուն (Քասըլ բնակող) Իշխանաց քով կգտնուի :

նները Լանովըի Ընդունի Թանգարանին մէջ կգտնուին։

Այս դժբաղդութենէն մէկ տարի ետքը, Բաբէն՝ Լինտոնի Ընդունի Ընկերութեան, իր վաղեմի բարեկամաց գրեց որ իրեն օգնեն ստակի կողմանէ, որպէս զի կարող ըլլայ, աւելի զօրաւոր մեքենայ մը շինելու, "Նաւերը տեղափոխելու" համար գործածուելիք։ Բայց Ընկերութիւնը Բաբէնի առաջարկութիւնը մերժեց, խնդրած ստակին գումարը մեծ ըլլալուն։ Երկու տարի ետքը, սրտմաշուքէ հալած ու մաշած, հոչակաւոր աքսորեալը, Բաբէն, մեռաւ, ուրիշին թողլով այս մեծ գիւտային կատարումը, մեքենայից շոգիով գործելուն այս մեծ գաղափարը։ Պէտք է յիշել նաև թէ, Բաբէն, որքան ալ հնարագէտ և մեծ հանճար ունէր նէ, մեծ դժուարութիւններ ունեցաւ, միանգամայն գործաւոր չըլլալուն. ուզածն, իր գաղափարին մէջ ծնունդ առածը, չկարենալ շինելուն։ Բայն որ ուրիշին ձեռքի գործին կսպասէ, հարկաւ քիչ յառաջադիմութիւն պիտի ընէ։ Այսպէս դժուար է, նոր մեքենայ մը, որ և է գործաւորի մը ձեռօք շինել տալ, որ կաշխատի միայն աւուրչէքը վաստկելու. ուրիշին համար աշխատողին ձեռքն ու աչքն անկարող են և տկար. Հնարողին՝ ոչ ձեռացը նման կգործեն, և ոչ աչացը նման կտեսնեն. զի ձեռք, աչք, աշխատողին ուղեղովն առաջնորդուելու է։ Այս պատճառաւ որ, շոգենաւն իր այսօրուան կատարելութեանը հասաւ, երբ տասնդաւոր գործաւորաց ձեռքն անցաւ, ինչպէս Նիւ Քոմըն "Երկաթագործին", Պոլինտէյ "Մեքենագործին", և մանաւանդ Ջէյմս Ուաթին, որ Մաթեմաթիքական գործիքներ շինող մ'էր։

Ուաթ, իր ժամանակին ամենէն հանճարաւոր մեքենագործ մ'էր. ինչ գործի որ ձեռք զարնէր, կուզէր զանի գլուխ հանել. այս հոչակաւոր անձին կենաց պատմութիւնը կպատգուցանէ, ինչպէս և Տիեզերական Պատմութիւնը, թէ, ամէն մեծ գործեր ու գիւտեր ընողներն, ոչ թէ մարդոց ամենէն խելացիներն են, այլ յարատևութեամբ և հաստատամտութեամբ աշխատողներն, և մանաւանդ այնպիսի աշխատութեան մը, որ միայն ժամանակաւ, փորձով և ընդհատութեամբ կատարումը կստացուի։ Պնուրանալի է թէ, Ուաթի ժամանակ, իրմէ աւելի խելացիներ և գիտուններ կային, բայց ոչ աւոր չափ աշխոյժութեամբ աշխատող, մանաւանդ մեծ ուշադրութիւն ընող ամէն ըրածին ու տեսածին։ Ինձ[illegible]* այս մասին կհամարձա-

---

*Ծնաւ 1744ին և մեռաւ 1817ին Յունվար։ տղայ հասակէն մեքենագործութեան զբաղիլ սկսաւ։ Ասի եղաւ 1763ին, հեռագրական թելին առաջին անգամ մտածողը։ Մեքենագործութեան վրայ բազմաթիւ գրութիւններ ունի։

կի ըսել թէ, միևնոյն արհեստի ծառայող բազմաթիւ մարդոց մէջ միայն մէկին կամ երկուքին, ամենէն աւելի հոչակաւոր ըլլալնուն միակ պատճառն է, նոցա՝ իրենց արհեստին պէտք եղած ուշադրութիւնն ընելնին, և ասկէ կախումն ունի, կըսէ, մարդոց իրարու մէջ եղած տարբերութիւնը, զի ամէն մարդ՝ միևնոյն կազմուածքն ու միևնոյն ուղեղն ունի, որ է կեդրոն մարդուս իմացական ամէն տեսակ կարողութեանց։

Ուսթ, դեռ տղայ, գիտութիւնն՝ իր խաղալիքներուն մէջ գտաւ. ատաղձագործ հօրը խանութին մէջ ասդին անդին նետուած շրջանակներու՝ կտորուանքներն, Ուսթի գաղափար տուին ֆիզիք և աստղաբաշխութիւն սովրելու. վատառողջ ըլլալն առիթ տուաւ, բնաշխնական գաղտնեաց խելամուտ ըլլալ. իսկ մաքուր և առողջ օդ շնչելու նպատակաւ, դաշտերու մէջ առանձին ժուռ գալը, փափաք տուաւ Տնկաբանութեան, Պատմութեան, և Ճարտարապետութեան հետևելու։ Ուսթ, որ միայն Մաթեմատիքայի վերաբերեալ գործիք շինող էր, օր մը, խնդրեցին իրմէ, որ երգեհն մը շինէ։ Ինչ, իր երաժշտական ականջ չունենալուն վրայ չվհատելով, անմիջապէս ներդաշնակութեան հետևելով, յաջողեցաւ վերջապէս խնդրուած գործիքը շինել։ Այնպէս, երբ, Ալսաքցի Ֆամալսարանին մէջ պահուած, Աիւ Ռօմընի շինած շոգենաւին օրինակն իրեն բերին, կոտրտած մասերը նորոգելու, վայրկեան չկորսնցուցած, սկսաւ տաքութեան, շոգիին, և շոգիին ջոյլ վերածուելուն վրայ, մինչև իր օրը գրուածները սովրիլ. այնպէս որ, գիտութեան այս ճիւղն, իր ճաշակին ամենէն աւելի յարմարելով, ալ այնուհետև գիշեր ու ցորեկ, շոգիին զանազան յատկութեանցն ու մեքենագործութեան ըզաղեցաւ, և որ, վերջապէս կարող եղաւ, շոգենաւն, իր այսօրուան կատարելութեան հասցնել։

Այլ հնարելը միայն բաւական չէ։ "Ֆնարելն", ինչպէս կըսէ Սըր Ուարք Պրունէլ, "բան մ'է, բայց հնարածը մարդոց ծանօթացընելն ալ ուրիշ բան մ'է"։ Երբ Ուսթ, ուրիմն, անընդհատ աշխատութեամբ, և աննման համբերութեամբ, իր մեքենայն կատարելագործեց, մեծ թշնամիներ և խոչընդոտներ ծնունդ առին. իր ժամանակակից բոլոր մեքենագործք չար նախանձով, միախորհուրդ այնպիսի նենգութիւններ ըրին, որոյ վրայ Ուսթ, շատ անգամ ըրած գիւտը պահել ստիպուեցաւ։ Իր գործարանին մէջ աշխատցուցած գործաւորաց չարութիւնն առաջին արգելք եղաւ, շատ տարիներ ունայն տեղը հոգնելու, և սիրտ ու մարմին մաշեցնելու։ "Կհարցնէք", կըգրէր Տօքթոր Ասպըքի, թէ, "ի՞նչ է մեքենայից շինութեան առա-

ջին արգելքն. — աղէկ գործաւորի և չմուտ գործաւորի պակասութիւն"։ Իր գործաւորայ մէջ, միայն մէկին վրայ չափազանց սէր ունէր, ինչպէս կգրէ, իր մէկ նամակին մէջ, Պ. Ռօպըքի թէ, "իմ ձեր գործաւորս մեռաւ. մեծ է այս կորուստս և անդառնելի"։

Տասը տարի անընդհատ աշխատեցաւ, իր մեքենայն աշխարհք լեցնելու, ընդդէմ անհամար թշնամեաց, զանազան դժուարութեանց, և մանաւանդ չմուտ գործաւորաց և պէտք եղած գործիքներու պակասութեան, առ աւելին և դժուարագունին, աղքատութեան. չի հաւնիր, օրական չոր հաց ուտելու չափ, ստակ կրնար աւելցնել։ Ան երբ կարող եղաւ, վերջապէս, մեքենայն բոլորովին լրացնել, աւելի յուսահատեցաւ, չարուստ ընկեր մը չկարենալ գտնելուն, որպէս զի կարող ըլլար աւելի ընտիր մը շինելու։ Այսպէս վհատած, կրկին իր նախնի արհեստին պարապիլ սկսաւ, այսինքն շրջանակներ, երաժշտական զանազան գործիքներ, և այլն, շինել, ինքն ու ընտանիքը, կարելի եղածին չափ, թշուառութենէ ազատելու։ Այդ գիշեր ու ցորեկ, շոգենաւին վրայ մտածելով, յաջողեցաւ վերջապէս, իրեն նման հնմուտ, աշխատասէր ընկեր մը գտնել, Պիրմինկամցի Մաթիու Պոլթըն, անուն անձն, որոյ հետ մի հոգի և միակամ աշխատելով, կարող եղան, շոգենաւն աշխարհածանօթ ընել։

Այդ ժամանակէն ի վեր, բազմաթիւ հոչակաւոր մեքենագործներ ծնան յաջորդաբար, և ամէնքն ալ իրենց աշխատութեամբը, մարդօգուտ, այս հրաշալի գործիքը, "շոգենաւին մեքենան", կատարելագործեցին. մանաւանդ որ շոգիով գործող մեքենաներ շատ արհեստներու մէջ խոթեցին, ինչպէս մեքենայով գործող մեքենաներ, ցորենը փշրել, գիրքեր տպել, ստակ կոխել, երկաթին զանազան ձևեր տալ, և այլն, և հարիւրաւոր ու հազարաւոր այլներ։ Շոգենաւին մեքենային ծնունդ առաւ նաև Երկաթուղիներու վրայ բանող շոգեկառքն որ գիւտ է նախ՝ Ռօպնսուօլ Ստեվենսըն Անգլիացիին, և երկրորդ՝ Ալֆրետ Մեքենագործին որ բոլորովին կատարելագործեց, մարդկութեան բարօրութեանն ամենէն կարևոր, այս հրաշալի գործիքն, ըսենք որ միջոց եղաւ ոչ միայն քաղաքայ մէջ եղած ահռելի հնութիւններն ոչնչացնել, այլ մանաւանդ չմուտ նանք ըսել, ազգաց իրարու հետ յարաբերութիւններն աւելցնելու, ազգաց սովորութիւններն ու կիրքերը մեծ չեղափոխութեանց մէջ դնելու. պատճառ եղաւ, և պիտի ըլլայ ազգերն իրար խառնելով, սովնեցնել ամենուն թէ ազգերն իրարմէ կատարելին, չէ թէ բնութեամբ, այլ կատարելին, որովհետև իրար չեն նախանձով, ժամանակն ու լեզուք, իրար օտարացուցած են. մարդկութեան բարերար գործիքն

ըլլալ սկսած է արդէն, սակրեցնելով ազգայ ընդհանրութեան, թէ մարդիկ, մի և նոյնն են, կաղմուածքի, այսինքն թէ՝ֆիզիքի և թէ բարոյականի կողմանէ. եթէ Վաղղեացին, Անգղիացին, Վերմանացին, մանաւանդ ժամանակին յարգը դիտցող, աշխատութեան համար ծնող, անկախ ու ազատ Ամերիկացին, խեղճ ու թշուառ Հայէս կըտարբերի, չէ թէ նոքա Հայեն տարբեր ստեղծուած են. այո կտարբերին. և կտարբերին, միայն դաստիարակութեամբ. —դաստիարակութեամբ է, այո, ազգայ մէջ եղած տարբերութիւնն, այս ճշմարտութիւնն, ամէն լուսաւորեալ գլուխ, ամէն բարի սիրտ, ամէն մաքուր խիղճ պէտք է բարձրաձայն գոչել ի լուր ամենեցուն և յօգուտ մարդկութեան . . . . :

Հ. Պրոռնաիեի :

ՄԱՐԴՍ

ԵՒ

Ա՞րդեօք բնական, արհեստական, և՞ ազգաբղխական կարողութիւննե՞րը*:

Եղեր այն փիլիսոփաները, բոլոր անոնք, որք գարերէ ի վեր բողոքած են բանականութեան անկարողութեան, և զանի մէջ Տուղղին դէմ, պարզելու եկած են այնպիսի խնդիր մը, որ միտքը ինչ գաղտնութիւն բաւական է զանի հասկընալ: Ասենք ամէն բանէ առաջ, որ, եթէ իրենց կարծիքներովն ու ապացոյցներովին, յաղթած ալ ըլլան հակառակորդներնուն, բանականութիւնը՝ նոցա ծառայած ընդհանուր սխալը կրնայ երևան հանել. և ենթադրելով որ նպատակնուն ալ հասած ըլլան, և յաղթեն, հազար հազար անգամ սխալմունք ըրած կըլլան բանականութեան դէմ բողոքելու, որ ըստ նոցա համոզման, իրաւունք տուած է իրենց: Իսկ մենք, գէնքն այնքան բարի կգտնենք, զոր միտքի մեզ դէմ գործածելու և իր օգուտները չզգալու, բոլորովին հակառակ ճամբով կերթանք, անոր (բանականութեան) շնորհիւն, օր քան զօր ճշմարտութիւնն ու լոյսն ակներև հանելու:

Ուրեմն է որ, աշխարհիս մէջ, բարեգործութենէ մը աւելի գեղեցկանց բան չկայ. որովհետև մարդկութիւնը սիրելու և անոր օգտակար ըլլալու համար է որ կեանքն ստացած ենք. իբրև մարդ գոյանալը, մարդկութեան մէջ գոյանալ, ընդհանուրին հետ և անոր համար ապրիլ է: Ուժանները ունենալ, իր հոգւոյն գանձերն անոնց վրայ սփռել, անոնց անձն ու իրաւունքներն յարգել է. նոցա հետ, արդարութեամբ վարուիլն, անոնց բնաւ թեթևացնել, և ներդաշնակաւոր

*Տես Վիլլկիա. թիւ 5. երես 182:

կրթութեամբ ու դաստիարակութեամբ , նոցա զգացողութիւնները փափկացնել , իմացականութիւնին լուսաւորել , և զանոնք ստորին դրդմանց գերութենէն ազատել է : Ա՛կ խօսքով , նոցա , միանգամայն մարմնոյն և հոգւոյն օրական սնունդը տալ է :

Վերյիշեալ մեր այս կարծեաց նայելով , ի՞նչպէս կրցեր են անկարելւոյն հաւատալով , ընդունիլ թէ , ի՞նչպէս այսպիսի վնհանձն զգացմունքներ , մեր տեսակին բարօրութեանը համար այսչափ բարեսէր յօժարութիւններ , կարող եղած են , երկրիս զանազան քաղաքաց մէջ խիստ ճշդութեամբ հսկցուիլ , այսչափ մարդկօրէն և երբեմն զբաղուարաւ գործադրուած , առանց զգալու : Ի՞նչպէս չեն տեսած որնա (բանականութիւնը) միակ կարող էր , մեր կազմուածքին բարձր զգացմունքը , լուսաւորել և առաջնորդել : Ի՞նչպէս չեն տեսներ թէ , լուսոյ առանց այս ճառագայթին (բանականութեան) բուն իսկ հոգին , բոլորովին խաւարի մէջ սիրտ ըլլար , և չպիտի պատասխանէր իր խնկական պաշտօնին :

Ուր որովհետև , մեր մտած ճամբուն մէջ ամենէն առաջ պէտք է երկիրը մաքրել , ի՞նչպէս մեր հակառակորդները չեն նշմարած թէ , իրենց խնդիրն անկատար և սխալ ճամբու մէջ էր : Վիտնալով որ մարդս բնութենէն ընդունած բզբզով կենդանական , բարոյական և իմացական կեանքն , ի՞նչպէս չեն հաստատած , ընդունած թէ , այս երեք տարբեր գոյութիւններն , իրարմէ անբաժանելի , անանջատելի և ներդաշնակաւոր են : Ահ այս կենաց ամէն մէկին , իր գործողութեան անհրաժեշտ կարևորութիւնն ունի . թէ անկարելի է զանոնք իրարմէ զատել , բաժանել , առանց խանգարելու . թէ միատեղ և իրարու համար կծնին . թէ անոնց մէջ այնպիսի կապ մը կայ , զոր ոչ մէկը կարող էր , և է քակել : Ի՞նչպէս չեն նշմարած թէ , կենդանական բերմունքը , բնական դրդումները , մարդուս գլխոյն ուժ , ադգում և կարողութիւն կուտային . թէ բարոյական զգացողութիւնները , նոյն ինքն սոյն բնական դրդմանց սաստկութիւնը կմաքրէին և կվսփկացընէին , միանգամայն թէ կառաջնորդէին անշահախնդրութեան , անձնուիրութեան և բարութեան . և թէ իմացականութիւնն ալ կընդմիջէր , ըստ կարգի , աշխուժութեան մէջ , մէկին և միւսին , ամենուն շարժումները հսկնալու , քննելու , գործներնին դատելու որոշում մը տալով և դատաստին համեմատ վարուելու : Մարդս լոկ ստորին յօժարութեանց մէջ , անասուն կենդանւոյ մը դործ կընէ . սոսկ բարոյական զգացողութեանց մէջ , կգործէ առանց տեսնելու , որոշման , քննութեան , առանց իսկական բարոյականութեան , տխմար մարդ մ՛է . իսկ լոկ իմացական կարողութեանց վերաձուած մարդն ալ չգիտէ ,

որո՞ւ և ինչի՞ վրայ իր լայսերը սփռել։ Գործողութեան բոլոր սկըզբունքներն իրմե կպակսին, և մեկ խօսքով ամէն բան ըսելու համար, մեր հակառակորդայ ձրի ենթադրութեանց նայելով, (որոնք արժէք մը չունին), մարդս, ոչ թէ արարչագործութեան գեղեցկութիւնն ու մեծութիւնը կպահէ, այլ առանց յատկութեան, անուամբ եակ մը կըլլայ։

Ընդունինք իրողութիւնները, ինչպես որ եղած են, բանանք բանականութեան բոլոր դռները, փչենք խաւարումն, և ճանչնանք թէ մարդս, ճշմարիտ առաքինութիւն գործելու համար, իմացականութեան կկարօտի. թէ իր վսեմ ընութիւնը չբաւեր նոյն անուան արժանի ըլլալու. թէ ճշմարիտ նշանակութեամբն, առաքինի չէ, երբ հաւիւ դիտէ թէ ըրածը բարեգործութիւն է, հնազանդելով միայն հոգւոյ անխորհուրդ և համեստ զգացման մը. և թէ, վերջապէս, ամէն բան լմնցնելով, առաքինութիւնն առաքինութիւն ըլլալու համար, քաջութիւն, անձնուիրութիւն, ճիգ և մանաւանդ դատողութիւն կուզէ։ Մարդս, երբ իր ազատ կչիռն ունի, մարդկութեան վերաբերող, ընդհանուր զգացմանց, յօժարութեանց և անձնասէր կրից շահերուն մէջ, ճշմարիտը քննելու, կշռելու, աղէկն ընտրելու կարողութիւնն ունեցած կըլլայ։ Այս նկատմամբ, ամէնքնիս ալ մեր իմացականութեան հնազանդ ջանկները կըլլանք։ "Տգիտութեան մէջ", ըսած է Պօնթէքքիէս, "ամենամեծ գեղութիւններ գործուիլն և ոչ մեկուն մտքէն կանցնի. իսկ լուսաւորեալ ժամանակի մը մէջ, ամենամեծ բարեգործութիւններ ընելու ատենին անգամ կդողան"։

Ոշֆուքօլտի* ըսածն աղէկ հասկցնելու համար է որ կաշխատինք, թէ "Յիմարը խելօք ըլլալու համար բաւական կտաւ չունի". և թէ Աստուածաւանք, իրենց կողմանէ, շատ մարդոց մոլորութեանց համար, կարող են հաստատել, թէ բոլոր աստնք կմեկնուի, նոցա ըսելին պակսութեամբ, և թէ, մեկ խօսքով, ամէն յանցաւոր իրօք տգէտ է։ Նոյն ինքն Յիսուս ալ այս միտքն ունէր. զի երբ չարչարուելու և իր շունչն աւանդելու մօտ, կսօսար, "Հայր՝ թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն". պատուական խօսքեր, որք կապացուցանեն միանգամայն, մարդուն իմացականութիւնն ու մեծութիւններն, և ուրիշ ապացոյցներու կարօտութիւն չեն թողուր։

Եւ որովհետև խօսքերնիս, իմացական կարողութեանց գերազանցութեան վրայ է, որո՞նք են ուրեմն, միւս կողմանէ, այն գործողութիւնները որք իրաւամբ, իրենց իմացականութեան աշխուժութեամբը, մարդկութեան ծառայող մարդոց գործողութիւններէն աւելի գերազանց կրնա՞ն համարուիլ։ Ըրդեօք իրենց վսեմ յարա-

*Իշնան ոը Մարսիլեաք անուամբ ալ ճանչցուած, հռչակաւոր գրագէտ, ծնաւ ի Փարիզ 1605ին և մեռաւ 1680ին։ Բազմաթիւ գրուածներ ունի. որոնցմէ "Բարոյական Առածք" անուն գիրքն, աշխարհաբանօրէն եղած է։ —

բերութեանց հասարակ ընդհանրին մէջ է. կամ թէ մէկ, երկու, եւ
րիք կամ ջրոս մարդոց վրայ է որ, դիտնական անձինք սիւռեցին ի-
րենց աղէկութիւնները: Ընդ որ ընդհանուր մարդկային տեսակին վրայ
է: Նա իրենց թանկագին դիւտերն, որչափ հոգնութեան, համբե-
րութեան, զոհերու, քաջութեան, ճգանց եւ անձնուիրութեան կա-
րօտ եղած են: Այսպէս, ճշմարիտ չէ՞, որ գրականութիւնք եւ գեղ-
արուեստքն են, զմարդկութիւնը չափով մը բարբարոսութենէ ազատող-
ներն, իր (մարդուն) կեանքը փափկացնողներն, եւ լուսաւորութիւնն յառաջ
տանողներն: Ուրեմն, հոս ալ նոյնպէս չե՞նք գտներ, մարդուս մտաց
այս հրաշալի պտուղներու մէջ, իր բնութեան, բարձր կնիքներէն մին:
Ուրեմն, ընդունինք նաեւս, ըսելով, այն տաղանդներն, որք ջանացին տալ
անոր, (մարդուս), կրթնիլ, բարոյականութեան եւ օրինաց բարձրագոյն
ճշմարտութիւնները: Լուսոյ եւ կենաց, այս ճառագայթները մեր հոգ-
ւոյն մէջ թափանցել տալու համար, ի՞նչ միջոցներ գործածեցին,
եթէ ոչ դաստիարակութիւն. եւ այս նպատակաւ, որ կարողութենէ
դիմեցին, եթէ ոչ իմացական կարողութենէ: Ընտրեցին ամենէն մեծ
ու ճշմարտասէրն, իր սկզբունքը յառաջ տանելու համար, ի՞նչ յայտնի
միջոցներով յաղթած է, եթէ ոչ քաղցրութեամբ եւ համոզմամբ:
Իրենց հետեւող ժողովրդեան եւ աշակերտաց կոչտ իմացականութեան
նայելով, ի՞նչ ճարտար եւ պարզ ոճ բռնած են, անոնց միտքը, գա-
ղափարն ու բնութիւնը փոխելու: Ահա, (իմաստութիւնն) մարդ-
կային կատարելութենէն այս կարողութիւնն, այս Դէյո-էին, որոյ
պատճէն, մեր հայրերն արձանների կանգնեցին, իմաստութիւնն,
ինքնին միակ կարող չեղած հին աշխարհը բոլորովին փոխել:

Այս չէ ամէն. եթէ իմացականութիւնը, մարդուս առաջին յատ-
կութիւնը չէ, եթէ իմացականութիւնն՝ իր գոյութեան միակ և ա-
պահով առաջնորդը չէ. եթէ անոր ցուցուցած ճամբուն հետեւելով,
զմեզ մոլորութենէ ի մոլորութիւն կձգէ. եթէ, մէկ խօսքով, Ըս-
տուծմէ մեզ պարգեւած պատուհաս մ՚է, ի՞նչ կնշանակեն, այսպիսի
կարծեաց հակառակ, ի սկզբանէ ի վեր, և ամէն ուրեք, իմացակա-
նութիւնը, միշտ յառաջ տանելու համար տրուած խնամքները, ճիգն
ու ջանքն: Նթէ, մէկդի թողունք այն մանաւանդ ընկերութիւնները,
որք միշտ ուղեցին հասարակաց դաստիարակութիւնը ձեռքերնին ա-
ռնել, իմացականութիւնն՝ իր սերմին մէջ խեղդելու, կամ թէ ծուռ
ճամբու մէջ դնել, ի՞նչ կնշանակեն բոլոր այն Դպրոցները, Ա-
ժարանները, Համալսարանք, Քատեմիայք և Ուսումնական Ընկե-
րութիւնները: Ի՞նչ կնշանակէ, մարդս՝ ինքզինքը լուսաւորելու ան-
յաղթ փափաքն: Ի՞նչ հետեւութիւն կրնանք հանել, իրենց գիտու-
թեամբը, կամ տաղանդովը, հռչակաւոր եղողներուն տուած փոխա-
րէններէն կամ քաջալերութիւններէն: Ի՞նչու համար զանոնք ամե-
աւելի կյարգնք, և օրինակ կհանդիսացնենք զանոնք, երիտասարդ
սերնդին: Ինչո՞ւ համար, իրենց մահուընէ ետքն ալ, յիշատակնե-

նին կանմահացնենք, իրենց անուանցն արձաններ կանգնելով, և այն Աստուածներն, զորս կուզենք մեծ իրաւամբ, ամէն տեղ բանալ և թիւերնին շատցնել, և զորս կնկատենք մարդուս մտաց ամենէն գեղեցիկ գործերն. ասոնք ի՞նչ կնշանակեն: Ա՛ր հակառակորդներն, որք բնութեան օրինաց տեղեակ չէին, կամ միշտ անոր դէմ և հակառակ ըլլալնին, բոլոր այս խնդրոց պատասխան, պատրաստ ունին:

Ըստ նոցա, ամէն բանի պատճառներ փնտռելն յիմարութիւն է: Իմացականութեան զարգացումը, քննութեան ազատութիւնն, ինքզինքը կրթելու փափաքը, արուեստից և գեղարուեստից վերականգնումն, անկախութիւնը, գիտութիւնն ու յառաջադիմութիւնը, գեղեցութիւն է: Իմացական կարողութեանց, բոլոր այս զարգացումները, Տպարտութեան կիրք, մարդկային սերնդոց օր ըստ օրէ ոչնչանալու միջոց կնկատեն, որք անգադար կգրգռեն ղմեզ, մեր երջանիկ տգիտութիւնը փարատելով, մինչև Աստուածութեան կատարելութիւն բարձրացնել:

Եւ սակայն, պէտք է աղէկ նշմարել, թէ սոյն կարծիքի տէր եղողներն ալ, շատ անգամ ըսած և խոստովանած են թէ, Աստուծոյ առաջին ստորոգելիքն, այն որ աշխարհը կկանոնաւորէ, այն է, իմացականութեան ստորոգելիքն. որ է իմացականութենանց իմացականութիւնն: Ընոցց ընդունած խօսքերն են, թէ, Աստուած զմարդն ստեղծեց իր պատկերին նման, և այս դաղափարներուն հետևելով կփափաքին մեր սրտից մէջ արմատացնել այն լոյսն, որ Աստուածութեան պիտի մատեցնէր զմեզ:

Ինչ որ ալ ըլլան բոլոր այն դրութիւնները, մեր կարծիքն ընութեան համաձայն կգտնենք: Ման սովրելու, ճանաչելու փափաքը, փափաքողին իմացականութեան ճառագայթ մը, իր ազնիւ ստեղծագործութեան վրայ ծագեցնել ուզել է. և այս նպատակին հասնելու համար, Աբարիչն, իմացական այն տեսակ կարողութիւններ տուած է —հասկնալու, լուծելու, բաղդատելու և հետևութիւն հանելու կարողութիւններ: Ա՛յս ասոնք են, ինքզինքնիս դաստիարակելու փափաքը, դիտութեան հակամիտութիւններնիս, աշխատութիւններնիս, մեր հարցուփորձները, մեր յառաջադիմութիւններն և միշտ աճող քաղաքակրթութիւնիս մեկնողները: Ա՛յառաջանանք ուրեմն, մեր կազմուածքին բնական կարողութեանց համեմատ: Ա՛յս այսպէս է որ, մարդս, ընդդէմ բոլոր այն խաւարելոց, իր Արարչին ձեռքը կմնայ և անոր օրէնքները կկատարէ: Ա՛յս, այսպէս է որ, մարդս կյաղթէ բոլոր այս արգելքներն, և վերջապէս կհասնի իր նպատակին:

Շարունակելի:

ԱԶԴ

ՍԱՒՐԻ ԳՕՂԱՍԻ ՆԿԵՂԵՑԻՈՑՆ ՋԱՆԳԱԿԱՀԱՐԸ

ԹՒՐՔԵՐՈՒԹԻՒՆ

Ի ՀՈՐՍ ԱՐԱԲԱՒԱՑ ԵՒ Ի ՄԻ ՅԱՒԱՋԱԲԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԿԱՐԱՊԵՏ Դ. ՏԱՓԷՍԵԱՆ

Ե.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

Կծանուի միայն Յ. Դաֆթաֆեանի դրատունը, որ Է՝ Զադմագ-ճըլար-Եօգուշու. թիւ 106. (Օլիմպիոսի խանին ներքև)։

Երիտասարդ Թարգմանչին աշխոյժ ոգին, անուշ ոճն ու լեզուն, անշուշտ իր ընտիր թարգմանութիւնը կարդացող Ընդհայինք, մեզ հետ պիտի ուրախանան, դրականութեան դժուարին ասպարիզին մէջ նետուող մ՚ալ աւելնալը տեսնելով։

Թատրոնը Դպրոց մ՚է, որ մարդուս Խարոյականութիւնը կուղղէ, Օգացողութիւնները կփափկացնէ, Սիրտը կնազնուացնէ, Ընդգասիրութիւնը կվառէ։ Մեր այս տողերուն ապացոյց և ճշմարիտ ըլլալն հաստատելու համար, բաւական է, Մեծարգոյ Թարգմանչին գործը կարդալ։ Ինչպէս որ ինքն ալ, իր յառաջաբանին մէջ կյիշէ, հռչակաւոր փիլիսոփային սա խօսքերը, թէ "Ըրդարև Թատրոնները շատ օգտակար են։ Ընդունմամբ է որ անգործ և թեթևաբարոյ երիտասարդք զգալու և խորհելու ունակութիւնը բոլորովին չեն կորնցներ. բարոյական գաղափարներ երբէք անոնց բոլորովին օտար չեն ըլլար, վերջապէս մտաւոր հաճոյութիւնները կրնան վայելել։ Ողբերգութեան մը յառաջ բերած զգացումները մարդուս հոգին կբարձրացնեն, կմաքրեն կհանեն անզգայութենէ և անձնասիրութենէ-հիւանդութիւնները, ախտեր, որոնց հարուստ և զեղխ մարդը ի բնէ մատնուած է։ Տեսարանները տեսակ մը հաղորդակցութիւն կհաստատեն խորհող և չխորհող կարդի մարդոց մէջ տեղ։ Դարձեալ Տեսարանները կամրջեն ոմանց խստաբարոյութիւնն, ոմանց ալ խստասրտութիւնն, որ հպարտութենէ և թեթևամտութենէ կծնանի". Տե՛ս Յառաջաբան Թարգմանչին։

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

1· Կոստանդնուպոլիս· — Ամսաթերթիս Գործակալութեան սեպհական է Գալաթիա, Տէյիրմէն խան· թիւ 14· —
2· ԻԶՄԻՐ· Պ· Մ· Մամուրեան:
3· ՍԱՄՍՈՆ· Խաչատուր Աղայ Սալճեան:
4· ՏՐԱՊԻԶՈՆ· Խ· Ա· Էլմասեան:
5· ՊՐՈՒՍԱՅ· Սեպուհ Աղայ Անդրէասեան:
6· ԹԷՔԻՐՏԱՂ·
7· ԻԶՆԻՄԻՏ· Աբրահամ Ա· Աղայ Մատթէոսեան:
8· ԱՏԱԲԱԶԱՐ· Տիգրան Աղայ Պօյաճեան:
9· ԱՆԴՐԻԱՆՈՒՊՕԼԻՍ·
10· ԿԷՅՎԷի ՄԻՋԱԳԻՒՂ· Մարտիրոս Աղայ Մանտեսի Ադամեանց:
11· ՊԱՂՋԷՀԻԿ Մկրտիչ Աղայ Տ· Յակովբեան:
12· ՓԵՐԱՍՕՆ· Ա· Յ· Աղայ· Վէլէտեան:
13· ՍԵԲԱՍՏԻԱ· Կիւրեղ Աղայ Օտապաշեան:
14· ԷՐԶԻՆԿԵԱՆ· Սիւրէն Գ· Ահարօնեանց:
15· ՀԱԼԷՊ· Նիկողոս Աղայ Տ· Մարգարեան:
16· ԱՐԱՊԿԻՐ·
17· ԹՈՓԱԹ Գէորգ Աղայ Խատէմեան:
18· ՄՈՒՇ·
19· ԱՏԱՆԱ· Միհրան Աղայ Մկրտիչեան· ժամագործ:
20· ԿԱՐԻՆ· Ս· Սեպուհ Մինասկան Աղայ Վարժապետեան եւ Մարտիրոս Աղայ Բրուտեան:
21· ՎԱՌՆԱ· Գրիգոր Յ· Մատուրեանց:
22· ՎԱՆ· Խազար Աղայ Նատանեան:
23· ԵԳԻՊՏՈՍ·
24· ԻՆԿԻՒԲԻՒ·
25· ԵԱՇ· Պ· Լուսիկ Սրմագաշեան:
26· ՊՕՓՈՒՇԱՆ· Յարութիւն Մ· Աղայ Յակովբեան:
27· ՌՈՄԱՆ· Դաւիթ Աղայ Պալասան:
28· ՓԱՐԻԶ· Մ· Ներսէս Ս· Մելքումեան rue St· Jacques· N· 161·
29· ՌՈՒՍԱՍՏԱՆ·
30· ՊԱՐՍԿԱՍՏԱՆ·
31· ԿԱԼԿԱԹԱ· Յովհաննէս Աղայ Ավտալեան:
32· ՊԱԹԱՎԻԱ· Գրիգոր Աղայ Նահապետեան:
33· ԱՄԵՐԻԿԱՅ·
34· ՎԻՆՆԱՅ·
35· ԽԱՐԲԵՐԹ· Արժանապատիւ Արիստակէս Վարդապետ:
36· ՅԻԼԻՊ· Նշան Մ· Աղայ Շիլմանեան:
37· ԹՈՒԼՉԱ· Աբրահամ Աղայ Բօբովիչ:
38· ՄԵՆ ՆՈՐ ԳԻՒՂ ՓԱՐԻԶՈՒ· Տ· Կարապետ Քահանայ Պէօճեկեանց:
39·
40·

ԱՄՍԱԹԵՐԹԻՍ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ա· ԿԻԼԻՒԻԱ, հիւրասիրական ազգային անգամ է; և կը գտնուի 48 երես:

Բ· Բաժանորդագրութիւնը տարեկան է·

Գ· Տարեկան գինը ամսօրեայ ԱԺԱՄԱՄԻՋՈՑ կ՚ընդունուի

Դ· Մեկ թուղթ գինն է ԵՐԿՈՒ ՊԱՐԻԶ, բայց ընդհատ կրնայ ծախուիլ առանձին ազգ ազգ, առանց բաժանորդ ըլլալու·

Ե· Գրութիւնները ծանրանան ձեռքով առնուին վճարելով·

Զ· Ամսաթերթիս վերաբերեալ նամակներ և յայտարարութիւններ հետևեալ հասցեով պէտք է ուղղուին·

Տոքթօր Մ· Բ· Իւթուճեան, խմբագիր Կիլիկիոյ ամսաթերթին

Կոստանդնուպոլիս Գալաթիա Տեյիրմէն խան թիւ 14·

Docteur M. P. Utudjian. rédacteur du *Guiligia*
Revue Hygiénique Arménienne.
Constantinople, Galata, Deyirmen han N°. 14.

Ամսաթերթիս խմբագիր, Տոքթօր Մարտիրոս Իւթուճեան հիւանդանոցին հասարակութեան, որ ամէն երեքշաբթի ժամը 6էն մինչև 12 յետ հինգի ազատ է:

Ինչը պետք է ընդունի իր տունը կանչ, նմանը ըլլայ թէ 9ը գոնէ ամէն օր մինչև ժամը 2ն առաւօտեան, իմ իմաց տալ, Գալաթիա, Տեյիրմէն խան թիւ 14 սենեակը: